



Ե Ր Կ Շ Ա Բ Ա Թ Ա Թ Ե Ր Թ

ՀՀ Դաշնակցության Արցախի Կենտրոնական Կոմիտեի պաշտոնաթերթ

Մենք համացանցում

www.aparaj.am

## Պաշտպանության բանակը՝ անվտանգության երաշխավոր

Ժողովրդական խոսքով՝ մարտը համարվում է գիծ ամիս: Իրոք, 2022թ. մարտը գիծ էր ոչ միայն եղանակային առումով, այլև՝ քաղաքական և կենցաղային: 44-օրյա պատերազմի պարտությունից հետո Արցախում մարտի 8-ին գազի խողովակաշարի պայթեցմանը զուգահեռ աննախադեպ ցուրտն ու ձյունը անակնկալի բերեցին Արցախի բնակչությանը: Այն Արցախում բնակվողների հոգեբանական ընկճվածությունն ու ցատումն առավելագույնի հասցնելու նպատակ էր հետապնդում: Այդ ամենին հաջորդեցին Փառուխ գյուղի և Շիկաքար բարձունքի իրադարձությունները: Զարագույնի բռնազավթումը, հատկապես պատերազմից հետո Արցախի տարածքում հայկական և ադրբեջանական զինված ուժերի շփման գծում հրետանային կրակի հետեւանքով զոհերի և վիրավորների փաստը նոր մտահոգությունների տեղիք տվեց:

Միջազգային հանրությունը վերջին օրերին իր ուշադրությունը սեւեռել էր Ուկրաինայի վրա: Ադրբեջանը, այդ առիթից օգտվելով, փորձեց նախ ստուգել Արցախի զինված ուժերի պատրաստվածության, ապա Ռուսաստանի հնարավոր հակազդեցության աստիճանը: Դեպքերի զարգացումը փաստեց, որ ՌԴ-ն ոչ միայն խաղաղապահ ուժերի միջոցով է պատրաստ խաղաղության երաշխավոր դառնալու, այլև չի խուսափում լայնամասշտաբ ճնշման միջոցներով Ադրբեջանին խաղաղություն պարտադրելուց: Մյուս կողմից, ըստ լրատվական կայքերի՝ Ադրբեջանի այժմյան նպատակը Արցախը զինաթափելն է, որի ուղղակի հետեւանքը կլինի Արցախի հայաթափումն ու ցեղասպանության փաստացի շարունակությունը:

Այս բոլոր երեւոյթների համայնապատկերում ի՞նչ է կատարվում հայկական կողմում: Նախ և առաջ նկատեցինք, որ Արցախում դիտվող հումանիտար իրավիճակը ՀՀ իշխանությունների մտահոգության առարկան էր: Միայն վերջին օրերին ՀՀ նորանշանակ ՄԻՊ-ը և ՀՀ վարչապետը գնահատական տվեցին դրան: Մինչ այդ, մարտի 10-ին ՀՀ կառավարության նիստում ՀՀ վարչապետը չցանկացավ գնահատական տալ Արցախում ադրբեջանցիների գործողություններին: Տպավորություն է ստեղծվում, թե ժողովրդին շինծու, սկանդալային նյութերով և լրատվությամբ զբաղեցնելով՝ ՀՀ իշխանությունների կողմից Արցախի օրակարգը հետեւողականորեն մատուցվում է որպես երկրորդական, անկարելի օրակարգ: ՀՀ իշխանությունների այս անհեռատես քաղաքականությունը ոչ միայն միջազգային ասպարեզում մեր վարկի ու հեղինակության անկման պատճառ է դարձել, այլև ներքին ճակատում ավելի շեշտակի է դարձրել անհանդուրժողականությունն ու պառակտումը: Այս ամենով հանդերձ, վերջին հաշվով, հիմնականն ու առանցքայինը մնում է Արցախում բնակվողների՝ դժվարություններին դիմադրելը: Պետք է խոստովանել, որ Արցախում ևս առկա է անվստահության մթնոլորտ: Տեղեկատվական միտումնավոր խառնաշփոթությունը (հատկապես՝ համացանցային լրատվական միջոցներով և Facebook հարթակով) ապատեղեկատվության մեծ հոսք է ստեղծում, որը հաճախ անտեղի խուճապի, բարոյալքության և հուսահատության պատճառ է դառնում, ինչն էլ այս ծանր հոգեբանական իրավիճակում մեր գլխավոր շարքային թշնամին է: Այս բոլոր իրողություններից գատ՝ ժամանակն է խորապես համոզվելու, որ մեր հույսը միայն մենք ենք: Զարագույնի դիրքերի կորուստը ապացուցեց, որ մեր անվտանգության միակ երաշխավորը ԱՀ Պաշտպանության բանակն է:



## Իրադրությունը շարունակում է լարված մնալ

Մարտի 24-ին Ադրբեջանի ՉՈՒ ստորաբաժանումները, կոպտորեն խախտելով 2020թ. նոյեմբերի 9-ի եռակողմ հայտարարության պահանջները, ներխուժել են Արցախի Հանրապետությունում Ռուսաստանի Դաշնության խաղաղապահ զորակազմի պատասխանատվության գոտի, վերահսկողության տակ վերցնելով Ասկերանի շրջանի Փառուխ գյուղն ու հարակից դիրքերը, ապա փորձել առաջխաղացում ապահովել Արցախի Հանրապետության արևելյան սահմանագոտում: Այս մասին մարտի 25-ի առավոտյան մամուլի հաղորդագրություն է տարածել ԱՀ ՊՆ մամուլի ծառայությունը: Հաղորդվել է, որ ռուսական խաղաղապահ զորակազմի և Արցախի համապատասխան մարմինների կողմից բանակցություններն երկուսն արդյունքներ չեն տվել, և հակառակորդը չի վերադարձել ելման դիրքեր: Ավելին, ադրբեջանական ստորաբաժանումները մարտի 25-ի գիշերը կրակ են բացել ՊԲ ստորաբաժանումների վրա՝ կիրառելով ինչպես տարբեր տրամաչափի հրաձգային զինատեսակներ, այնպես էլ հարվածային ԱՅՍ: Ծավալված փոխհրաձգության արդյունքում հակառակորդի կողմից զոհվել է առնվազն 5 զինծառայող:

Այնուհետև հայտնի է դարձել, որ Արցախի արևելյան սահմանագոտում թշնամու ձեռնարկած սադրանքների, մասնավորապես՝ Bayraktar TB-2 տեսակի հարվածային անօդաչու թռչող սարքերի կիրառման հետեւանքով մահացու վիրավորում են ստացել ՊԲ պայմանագրային զինծառայողներ Դավիթ Ռոբերտի Միրզոյանը (ծնվ. 1978թ.), Իշխան Սերժիկի Օհանյանը (ծնվ. 1994թ.) և Արարատ Վազիֆի Թեւոսյանը (ծնվ. 1990թ.):

ԱՀ մարդու իրավունքների պաշտպան Գեղամ Ստեփանյանը տեղեկացրել է, որ 14 անձինք ստացել են տարբեր աստիճանի վիրավորումներ: Վիրավորման գրեթե բոլոր դեպքերն արձանագրվել են Ադրբեջանի զինված ուժերի կողմից անօդաչու թռչող սարքերի կիրառման հետեւանքով:

Մարտի 25-ից հետո ԱՀ ՊՆ և այլ մարմինների կողմից հրապարակված հաղորդագրություններում նշվում է, որ ձեռնարկվում են քայլեր՝ ՌԴ խաղաղապահ զորակազմի հրամանատարության հետ իրադրության հանգուցալուծման ուղիներ գտնելու ուղղությամբ:

Միաժամանակ նշվում է, որ իրադրությունը շարունակում է մնալ լարված:

ԱՀ նախագահ Արայիկ Հարությունյանի գլխավորությամբ մարտի 25-ին տեղի է ունեցել Անվտանգության խորհրդի նիստ, որի ընթացքում որոշում է կայացվել պաշտոնական գրությամբ դիմել Ռուսաստանի նախագահ, ՌԴ Անվտանգության խորհրդի նախագահ Վլադիմիր Պուտինին՝ ելնելով Արցախում ստեղծված ռազմաքաղաքական իրավիճակից և 2020 թվականի նոյեմբերի 9-ի եռակողմ հայտարարության դրույթներից: ԱԽ-ն առաջարկել է ավելացնել ՌԴ խաղաղապահ զորակազմի ներկա թվաքանակն ու սպասարկող միջոցների քանակը և, համապատասխանաբար, ավելացնել ինչպես զինծառայողների, այնպես էլ զինտեխնիկայի միջոցները:

Մարտի 26-ին ՌԴ ՊՆ-ն հաղորդագրություն է տարածել՝ շեշտելով, որ մարտի 24-25-ն ընկած ժամանակահատվածում Ադրբեջանի ՉՈՒ-ն խախտել է եռակողմ հայտարարության դրույթները:

«Մարտի 24-25-ը Ադրբեջանի Հանրապետության զինված ուժերը, խախտելով Ռուսաստանի, Ադրբեջանի և Հայաստանի ղեկավարների՝ 2020 թվականի նոյեմբերի 9-ի եռակողմ հայտարարության դրույթները, մտել են Լեռնային Ղարաբաղի տարածքում ռուսական խաղաղապահ զորակազմի պատասխանատվության գոտի և տեղադրել դիտակետ: «Բայրաքթար» TB2 տիպի անօդաչու թռչող սարքից չորս հարված է հասցվել Լեռնային Ղարաբաղի զինված ստորաբաժանումներին Փառուխ բնակավայրի տարածքում:

Ներկայում ռուսական խաղաղապահ զորակազմի հրամանատարությունը միջոցներ է ձեռնարկում իրավիճակը կարգավորելու և զորքերն իրենց ելման դիրքեր վերադարձնելու համար: Ադրբեջանական կողմին զորքերը դուրս բերելու կոչ է հղվել,- նշված է Դաշնության պաշտպանական գերատեսչության հաղորդագրության մեջ:

Մարտի 31-ի դրությամբ իրադրության փոփոխություն չի եղել, պաշտոնական հաղորդագրություններում շեշտվում է, որ իրադրությունը շարունակում է մնալ լարված, իսկ ադրբեջանական զորքերը գտնվում են Զարագույնում իրենց զբաղեցրած դիրքերում:

### ՀՅԴ-ն խստորեն դատապարտում է Արցախի դեմ Ադրբեջանի որդեգրած հարձակողական քայլերը

Վերջին շրջանում իրավիճակն Արցախում կրկին լարվել էր Ադրբեջանի սահմանների պատճառով, որին անմիջապես արձագանքել է ՀՅԴ Բյուրոն՝ գործարժի ենթարկելով Դաշնակցության բոլոր կարելիությունները: ՀՅԴ Բյուրոն հանդես է եկել հայտարարությամբ, որի մեջ սավում է.

նաե կասկածելի հիմքերով իրականացված սահմանագատումներից հետո, չհանդիպելով որեւէ դիմադրության, անցել է բացահայտ զավթողական քաղաքականության:

2021 թվականի մայիսի 12-ին Սյունիքի եւ Գեղարքունիքի մարզերի որոշ ռազմավարական ուղղություններով ադրբեջանական զինուժը հատել է Հայաստանի Հանրապետության սահմանը եւ խորացել մի քանի կիլոմետր: Ադրբեջանական զինվորականների ներխուժման արդյունքում առաջացել են անվտանգային լրջագույն սպառնալիքներ: Հեռահար նպատակադրումներով կատարված ադրբեջանական բացահայտ ագրեսիան ստեղծել է

Այս ընթացքը պարտավոր ենք կասեցնել: ՀՀ Դաշնակցության Բյուրոն աշխարհի տարբեր երկրներում գործարժի է ենթարկել Դաշնակցության բոլոր կարելիությունները՝ Ադրբեջանի վրա ճնշում բանեցնելու ուղղությամբ, միաժամանակ պատրաստ լինելով ինքնակազմակերպվելով պաշտպանել մեր պետությունն ու քաղաքացիների անվտանգությունը»:

Արցախում ստեղծված իրավիճակին անմասն չեն մնացել ՀՅԴ Հայ դատի գրասենյակները:

Մասնավորապես.

ՀՅԴ Կիպրոսի Հայ դատի մարմինը հանդես է եկել հայտարարությամբ՝ կապված մարտի 24-ին ադրբեջանական զորքերի՝ Արցախի Ասկերանի շրջանի Փառուխ գյուղ ներխուժման հետ: Հայտարարության մեջ սավում է.

«Ազրայեյանի լկտի պահուստը եւ սանձազերծած դաժան քաղաքականությունը պետք է արժանանայ միջազգային հանրության ամենախիստ գնահատականին: Անտարբերությունը կարող է անելի սարսափելի հետեւանքներ ունենալ, եւ քաջալերե, որ թշնամին նոր սպառնալիքներ հնչեցնե:

Արցախի ժողովուրդը կը շարունակե ամուր կանգնիլ իր հողին վրայ: Արցախը հայկական աշխարհի անբաժանելի մասն է, որու հետ կապուած ենք արեամբ, հոգիով ու սրտով, մշակոյթով ու պատմութեամբ»:

ՀՅԴ Լիբանանի Հայ դատի մարմինը Արցախում տեղի ունեցող իրադարձությունների հարցով կապ է հաստատել ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահ պետությունների եւ ՄԱԿ-ի Ապահովության խորհրդի անդամ երկրների դեսպանների հետ:

«ՀՅԴ Լիբանանի Հայ դատի մարմինը ՄԱԿ-ի Ապահովության խորհուրդի ան-

դամներուն ու ԵԱՀԿ-ի Մինսքի խմբակի համանախագահող երկիրներուն հրատապ կոչ կուղղե՝ պետք եղած շօշափելի քայլերը որդեգրելու Ազրայեյանի եւ Թուրքիոյ կողմէ հակահայ քաղաքականութեան եւ սպառնալիքներու անմիջական դադրեցումը եւ Հայաստանի Հանրապետութեան ու Արցախի մէջ հայ ազգի քաղաքական, ընկերային ու մարդու իրաւունքներու իրականացման համար պետք եղած երաշխիքները ապահովելու համար:

«Միայն այս գոյութեանական հիմնական տարրերու ապահովումէն ետք է, որ պատշաճ պայմաններ պիտի ստեղծուին վերականգնելու ԵԱՀԿ-ի Մինսքի խմբակի համանախագահութեան հովանիին տակ բանակցութիւնները, որոնց նպատակը շրջանին մէջ Հայաստանի Հանրապետութեան եւ Արցախի ժողովուրդին շարունակական ձգտումը եղող երկարատեւ խաղաղութեան հաստատումը, զարգացումն ու բարգաւաճումն է»:

ՀՅԴ Կանադայի Հայ դատի հանձնախումբը մարտի 29-ին հաղորդագրութիւն է հրատարակել, որում անդրադարձ է կատարվում Արցախի հանրապետությունում լարվածության սրացման եւ խաղաղ բնակչության դեմ Ադրբեջանի ահաբեկչական գործողություններին:

Հայտարարության մեջ հանձնախումբը խստորեն դատապարտում է Արցախի դեմ Ադրբեջանի որդեգրած հարձակողական քայլերը եւ կոչ է անում Կանադայի կառավարությանը անհապաղ դատապարտել Բաքվի քաղաքական այդ ընթացքը եւ օգտագործել իր տրամադրության տակ գտնվող դիվանագիտական բոլոր միջոցները՝ զսպելու Ադրբեջանի բռնության եւ տարածաշրջանը ապակայունացնելու փորձերը:



«Արցախյան վերջին պատերազմից հետո Ադրբեջանը ոչ միայն շարունակում է սպառնալիքներ հնչեցնել եւ պահանջներ ներկայացնել, այլեւ բացահայտ քայլեր է ձեռնարկում Հայաստանի Հանրապետության ինքնիշխանության եւ տարածքային ամբողջականության դեմ:

«Կոպտորեն ոտնահարելով նոյեմբերի 9-ի զինադադարի եռակողմ հայտարարության դրույթները, Ադրբեջանը ոչ միայն հրաժարվում է վերադարձնել գերիներին եւ այլ պահվող անձանց, այլեւ Արցախի Հանրապետության խճաբերդի, Հին Թաղերի ռազմակալումից, ապա

ռազմական բախման եւ պատերազմի իրական վտանգ:

Օգտվելով Հայաստանի Հանրապետության իշխանությունների հանցավոր անգործությունից, Ադրբեջանը փորձում է թելադրել իր կամքը՝ ոտնահարելով միջազգային իրավունքի հանրաճանաչ նորմերը: Այսօր արդեն վտանգված է Հայաստանի տարածքային ամբողջականությունը: Ադրբեջանի ագրեսիան կանխելու, հակազդելու փոխարեն Նիկոլ Փաշինյանի գլխավորած վարչախումբը շարունակում է իր ապաշնորհ կառավարմամբ կործանման տանել երկիրը:

### Արցախի Ազգային անվտանգության ծառայության կազմում կստեղծվի մարտական ստորաբաժանում

«Ազգային անվտանգության մարմինների մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին» հարցն ընդգրկված էր Արցախի Հանրապետության Ազգային ժողովի մարտի 30-ին կայացած նիստում: Նիստի ժամանակ օրենքի նախագիծը ներկայացրել է Արցախի Հանրապետության Ազգային անվտանգության ծառայության ներկայացուցիչ Նվեր Գասպարյանը:

Իրավական ակտի ընդունման անհրաժեշտությունը բացատրվում է Արցախի Հանրապետության պետական սահմանի /շփման գծի/ պահպանության գործում ազգային անվտանգության ծառայողների կողմից մարտական հերթապահություն իրականացնելու գործընթացը իրավական առումով ամրապնդելու եւ հետագա իրավադատաբերությունները կարգավորելու նպատակով:

«Ազգային անվտանգության մարմինների մասին» օրենքի 3-րդ հոդվածը սահմանում է, որ Արցախի Հանրապետության ազգային անվտանգության մարմինների համակարգը կազմված է լիազորված մարմնից, նրան ենթակա՝ կենտրոնական եւ քաղաքային /շրջանային/ կառուցվածքային ստորաբաժանումներից: Օրենքի 4-րդ հոդվածը սահմանում է, որ լիազորված մարմնի համակարգում սահմանված կարգով գործում են հետախուզական, հակահետախուզական, ռազմական հակահետախուզական մարմինները:

Օրենքի նախագծով առաջարկվել է օրենքի 4-րդ հոդվածի երկրորդ մասում «մարմիններ» բառից հետո լրացնել «եւ մարտական ստորաբաժանումներ» բառերը: Օրենքի 14-րդ հոդվածում «գորքերը» բառից հետո լրացնել «եւ լիազոր մարմնի համակարգում գործող մարտական ստորաբաժանումները» բառերը:

Նշվում է, որ նախագծի ընդունումը կնպաստի Արցախի Հանրապետության ազգային անվտանգության ծառայության լիազոր մարմնի համակարգում գործող

մարտական ստորաբաժանումների կողմից իրականացվող մարտական հերթապահությունների ընթացքում ծագող իրավադատաբերությունների կարգավորմանը:



ԱՀ Աժ օրակարգային հարցերից էր նաե երկրորդ ընթերցման ներկայացված «Արցախի Հանրապետության Սահմանադրության փոփոխության մասին» օրենքի նախագծի քննարկումը, որը ԱՀ Գերագույն դատարանը ճանաչել է Սահմանադրությանը համապատասխանող: Նախագծի փոփոխությամբ առաջարկվում է Սահմանադրությամբ նախատեսված վարչատարածքային բաժանման վերանայման գործընթացի ժամկետները երկարաձգել՝ 5 տարին դարձնելով 10 տարի:

«Պետական կենսաթոշակների մասին» օրենքում

փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» եւ «Չինվորական ծառայության եւ զինծառայողի կարգավիճակի մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին» օրենքների նախագծերի փաթեթը քննարկվել էր Աժ սոցիալական եւ առողջապահության հարցերի մշտական հանձնաժողովում եւ դրական եզրակացությամբ ներկայացվել հերթական նիստի քննարկմանը: Օրենքների նախագծերի փաթեթի ընդունման դեպքում առկա (ցերեկային) ուսուցմամբ սովորող անձի՝ կերակրողին կորցնելու դեպքում կենսաթոշակ եւ պարգեւավճար ստանալու իրավունքը կպահպանվի մինչեւ նրա 26 տարեկանը լրանալը, հաշմանդամության զինվորական կենսաթոշակների համար օրենքով սահմանված սահմանափակումը կվերացվի, կիստակեցվի զինվորական կենսաթոշակների վերահաշվարկման գործընթացը, կերկարաձգվեն դադարեցված կենսաթոշակների վճարումները վերսկսելու համար դիմելու ժամկետները, ինչպես նաե կվճարվեն 2020 թվականի սեպտեմբերի 27-ին Արցախի Հանրապետության դեմ սանձազերծված պատերազմական գործողությունների հետեւանքով Արցախի Հանրապետության վերահսկողությունից դուրս մնացած բնակավայրերում աշխատած անձանց կենսաթոշակի իրավունքը ծագելու օրվանից չստացած կենսաթոշակի գումարները:

«Արցախի Հանրապետության պետական պարգեւների եւ պատվավոր կոչումների մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին» օրենքի նախագծով առաջարկվում է պատվովճար նշանակել ու վճարել Վաստակավոր պատվավոր կոչման արժանացած այն կենսաթոշակառուին, ով չի զբաղեցնում պետական կամ համայնքային որեւէ պաշտոն:

Օրենքների նախագծերը խորհրդարանն ընդունել է միաձայն:

### Արցախը վիրավոր վիճակում է, բայց ոգին ընկճված չէ

ԱՅ նախագահի՝ կրթության գծով խորհրդակցական, ԱրԴՀ ավագ դասախոս Արմեն Սարգսյանի հետ «Ապառաժ»-ը գրուցել է Արցախում կրթական հիմնախնդիրների, դրանց լուծման ուղիների, մշակույթի բնագավառի զարգացման, բռնազավթված տարածքների մշակութային ժառանգության պաշտպանության եւ այլ հարցերի շուրջ:

**- Հետպատերազմյան շրջանում որո՞նք եք համարում Արցախի կրթական համակարգի առջև ծառայած խնդիրները:**

- Մինչև պատերազմը գոյություն ունեին պետական ծրագրեր, եւ շարժվում էին դրանցով: Նախարարության հետ քննարկում էինք, թե ինչ կետեր կարելի է փոփոխել: Մինչև 2025թ. կրթական համակարգի ուղենիշը հայտնի էր, պատերազմի ընթացքում շատ բան փոխվեց: Դրանից հետո Արցախում կրթության զարգացումը կբաժանվի երկու փուլի: Առաջինը պատերազմից հետո վերականգնումն է: Մենք կորցրինք տարածքներ, որտեղ գործող դպրոցների աշակերտների մեծ մասը տեղափոխվեց Ստեփանակերտ, մասամբ էլ՝ այլ վայրեր: Մի շարք տեղերում տեղի դպրոցներին հետ միացան, որոշ դեպքերում նույն աշխատակազմով ու աշակերտներով դպրոցները պահվեցին, օրինակ՝ Հադրութի դպրոցը: ԱՅ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարության համար վերականգնումը լուրջ գործընթաց էր, որովհետեւ բռնազավթվածներն աստիճանաբար վերադառնում էին Արցախ, եւ աշակերտների թիվը փոփոխվում էր:

Ընդհանուր իրավիճակը քիչ թե շատ կարգավորելուց հետո, երկրորդ հանգրվանը կրթական համակարգի կանոնավոր հուն վերադառնալն է: արդեն կարելի էր մտածել կրթական համակարգի զարգացման մասին: Պատերազմից հետո շատ կարելի էր փոփոխություն կատարվեց. դա անցումն է անվճար կրթական համակարգի: Նախ ասեմ, որ անվճար կրթական համակարգը միայն սոցիալական բաղադրիչ չէ: Անվճար կրթական համակարգը խորը վերափոխում է, որի նպատակն է ուսման որակի բարձրացումը: Եթե նախկինում համալսարանն իր ծրագրերն իրականացնում էր ուսանողների վարձավճարների հաշվին, ապա այժմ նրա բյուջեն պետությունն է հոգում: Հետեւաբար, պետությունն ավելի շատ պատասխանատվություն է կրում կրթական համակարգի համար, քանի որ հիմնական ֆինանսավորողն ինքն է: Պետությունը հաշվարկում է, թե իր տնտեսության զարգացման համար ինչ մասնագետներ են պետք եւ ավարտած շրջանավարտները ինչ աշխատանք կարող են գտնել: Արդյունքում մասնագիտություններն արդիականանում են եւ հարմարվում ժամանակակից պահանջներին, պետության առջև ծառայած խնդիրներին:

Ի դեպ, ավելացնեմ, որ անվճար կրթական համակարգը նաեւ ՀՀ-ի ծրագրային դրույթ է, որն ընդունվել էր դեռեւս 1908թ., եւ անվճար կրթության ասպարեզում ՀՀ-ի եւ պետական քաղաքականությունը համընկնում են:

**- Վերջին մի քանի տարվա ընթացքում անընդհատ փոփոխվում են ԱՅ ԿԳՄՍ նախարարները: Պատասխանատուների հաճախակի փոփոխությունը չի՞ վնասում արդյոք կրթության ոլորտին:**

- Կրթական համակարգը պահպանողական է՝ լավ իմաստով: Բայց ներկա իրավիճակում, առանձնապես Արցախի Հանրապետությունում, երբ ամեն օր ծառանում են նոր խնդիրներ եւ Արցախի Հանրապետությունը պետք է ինտեգրվի միջազգային կրթական համակարգին, կարելի էր ճիշտ կարգեր ընտրել: Ուստի, փոփոխությունը պետք է դիտարկել

ոչ թե թվի, այլ ծառայած խնդիրները լուծելու ունակությամբ:

**- Պատերազմի, համավարակի, վերջին օրերի եղանակային պայմանների, գազի մատակարարման հետ կապված խնդիրների պատճառով մեծապես տուժում է դասագործընթացը: Ձեր կարծիքով, ինչքանով էն այդ չնախատեսված խոչընդոտներն ազդում կրթության որակի վրա:**

- Միանշանակ ազդում են, բայց նախարարությունն առավելագույնս միջոցներ է ձեռնարկում բացասական ազդեցությունը նվազեցնելու համար: Համավարակի պայմաններում հեռավար ուսուցման անցնելը միակ ձեռն էր, որն սկզբնական շրջանում դժվարություններ հարուցեց, բայց հետագայում լուծում ստացավ: Իսկ բնութային տարբերի դեմ ոչինչ չեն կարող անել:

**- Դուք 1997-2002թթ. ԼՂՀ մշակույթի, երիտասարդության հարցերի եւ սպորտի, իսկ 2002-2004թթ. ԼՂՀ կրթության, մշակույթի եւ սպորտի նախարարն էիք եւ բավականին ակտիվ կապեր էիք հաստատել Սփյուռքի հետ: Հիմա ինչպե՞ս եք պատկերացնում Սփյուռքի դերը Արցախում կրթության, մշակույթի ոլորտների զարգացման գործում:**

- Միանշանակ մեծ դեր են հատկացնում Սփյուռքի դերակատարությանն Արցախում՝ վերոնշյալ ոլորտների զարգացման առումով: Արցախ-Հայաստան-Սփյուռք եռամիասնության կարելի է օղակներից մեկը կրթության, մշակույթի ոլորտներում փոխգործակցությունն է: Սփյուռքի մեր հայրենակիցները, գալով Մայր հայրենիք, տեսնում են այստեղի մեր կրթական օջախները, մենք էլ ականատես ենք լինում, թե ինչպես կարելի է առանց պետության մշակութային, կրթական հսկա օջախներ պահել Սփյուռքում: Այսինքն, երկուստեք սովորելու շատ բան ունենք եւ, միանշանակ, այդ կապը պետք է լինի ամենաբարձր մակարդակում:

**- 2019թ. դուք ԱՅ ԱԾ կրթության, գիտության, մշակույթի, սպորտի եւ երիտասարդության հարցերի մշտական հանձնաժողովի նախագահն էիք, երբ սեպտեմբերին Հուլիսում հռչակագիր ստորագրվեց ՀՀ ԱԾ համանուն հանձնաժողովի հետ: Ի՞նչ է հաջողվել իրականացնել հուշագրի շրջանակներում:**

- Կարելի էր եւ հուշագրի ստորագրումը: Առաջին քայլը կատարվել է այն ժամանակ, երբ ԱՅ ԱԾ ԿԳՄՍ հարցերի մշտական հանձնաժողովի նախագահն Արպատ Ավանեսյանն էր: Հետագայում երկու հանձնաժողովների միջեւ համագործակցությունը շարունակվել է: Երբ ես էի ղեկավարում հանձնաժողովը, արդեն կնքել ենք հուշագիր: Ուրախ եմ, որ մինչև հիմա էլ շարունակվում է համագործակցությունը:

Կրթության, մշակույթի ոլորտում, հանդիսանալով ՀՀ մասնիկը, հնարավոր էր առանց համաձայնեցված փոխգործակցության կամ դեպքից դեպք կապ հաստատել ՀՀ համապատասխան մարմինների հետ: Ըստ ձեռք բերված պայմանավորվածության, թե թե ՀՀ-ում այդ ոլորտում ընդունվում է օրենք, ապա ԱՅ ներկայացուցիչները՝ Ազգային ժողովից եւ նախարարությունից, ցանկալի է, որ մասնակցեն տվյալ նախագծի քննարկմանը: Մինչ նախագծի ընդունումը՝ այն Արցախում անցնում է քննարկման փուլ: Երբ ժամանակին ընդունվել է

հանրակրթության մասին օրենքը, Արցախից 300-ից ավելի առաջարկ է ներկայացվել:

Այդ հուշագրի ստորագրման մեր նպատակն էր, որ ոչ թե նախարարների, Ազգային ժողովի պատգամավորների մակարդակով շփվեն երկու երկրների համապատասխան մարմինները, այլ կարելի էր օրենքների դեպքում ամբողջ համակարգը քննարկել եւ համակարգից ստացված կարծիքները ներկայացվել:

**- Հանձնաժողովների միջեւ փոխգործակցության փորձը կարո՞ղ է արդյոք օրինակ դառնալ ԱՅ եւ ՀՀ Ազգային ժողովների միջխորհրդարանական հանձնաժողովի նիստերի կայացման համար:**

- Իհարկե, կարող է. հենց կրթության, գիտության, մշակույթի, երիտասարդության հարցերի հանձնաժողովների միացյալ կիստը շատ լավ օրինակ կարող է ծառայել:

**- Իսկ ինչպե՞ս եք պատկերացնում ՀՀ Դաշնակցության դերը հետպատերազմյան Արցախի կրթական ու մյուս ոլորտների զարգացման գործում:**

- Մեծ տեղ են հատկացնում Արցախում ՀՀ կառույցների աշխատանքին մի շարք ուղղություններով: Նախ, ակախության տարիներին ՀՀ Դաշնակցությունը Արցախում կրթական, մշակույթի ասպարեզի զարգացման համար ֆինանսական եւ տեխնիկական առու-



Արման Ավակյան, ԱՀ ԱԾ նախագահի տեղակալ:

մով մեծ խնդիրներ է լուծել: Օրինակ, մեր համույթները ՀՀ-ի եւ քույր կառույցների հրավերով հրավիրվել են արտասահման: Երբ երաժիշտը մեծ բեմեր չի ունենում, նրա տաղանդն ինչ-որ տեղ սահմանափակվում է: ՀՀ Դաշնակցության միջնորդությամբ մի շարք ֆինանսական հարցեր են լուծվել: Չենք կարող չնշել ՀՀ-ի քույր կառույցի՝ ՀՕՄ-ի միջոցով կրթաթոշակների վճարման, մանկապարտեզների կառուցման եւ այլ ոլորտներում համագործակցությունն Արցախի հետ:

Կրթության ասպարեզում Հայ կրթական հիմնարկությունը դպրոցների վերանորոգման, գույքի ապահովման աշխատանք է կատարում: Համազգային հայ կրթական եւ մշակութային միությունը, Հայ մարմնակրթական ընդհանուր միության Արցախի նոր մասնաճյուղը եւս ակտիվ աշխատանք են տանում Արցախում: Ներկայումս Հայ դատի միջոցով փորձում ենք միջազգային մակարդակով ներկայացնել Ադրբեյջանի կողմից Արցախի հուշարձանների ոչնչացման հարցը: Վերջերս Եվրախորհրդարանում ընդունվեց բանաձեւ, որտեղ մեծ դերակատարություն ունեցավ ՀՀ-ի Հայ դատի Եվրոպայի գրասենյակը:

**- Այս պայմաններում ինչպե՞ս կարող ենք պաշտպանել բռնազավթված տարածքների հայկական մշակութային ժառանգությունը, հուշարձանները:**

- Եվ պետական առումով, եւ Սփյուռք-

քի տարբեր կառուցների կողմից աշխատանք է ծավալվում, որպեսզի հայկական հուշարձանների ոչնչացման գործընթացը կանգնեցվի: Վստահ եմ, որ վաղ թե ուշ մենք կազատագրենք մեր հայրենիքի բռնազավթված մասը եւ տեղ կկանգնենք պատմական հուշարձաններին: Ներկայումս կան աշխարհաքաղաքական լուրջ հակասություններ, նոր վերափոխումներ աշխարհի բեւեռների միջեւ, եւ փոքր ազգերը իմաստուն քաղաքականությամբ կարող են ճիշտ կողմնորոշվել եւ հասնել հաջողությունների:

Պետք է մեր ողջ ներուժն օգտագործել եւ համայն հայության շանքերով այս հարցն անընդհատ օրակարգում պահել՝ կանգնեցնելու հայկական հուշարձանների ավերման գործընթացը:

**- Արցախյան առաջին պատերազմից հետո Արցախը համայն հայության հպարտության, միասնականության խորհրդանիշն էր դարձել: Այդ առումով, ներկա պայմաններում ինչպե՞ս եք տեսնում Արցախի դերը:**

- Այսօր պետք է համայն հայությունը միասնաբար գործի՝ հանուն Արցախի, որովհետեւ Արցախը Հայաստանի անբաժանելի մասն է, եւ Հայաստանի մարմնի այս վիրավոր մասը պետք է բուժվի: Արցախը վիրավոր վիճակում է, բայց ոգին ընկճված չէ: Սրանք միայն բառեր չեն: Թաղավարդում թուրքերը դպրոցից 500 մետր հեռավորություն վրա են, բայց աշակերտները հաճախում են դպրոց: Պատերազմից հետո Արցախի դպրոցահասակ երեխաների գերակշիռ մեծամասնությունը շարունակում է այստեղ սովորել: Վիրավոր Արցախը շարունակում է մաքառել:

Պետք է լուրջ դասեր քաղել պատմությունից: Անկախություն ստանալուց հետո, ՀՀ-ի ժամանակ խոսում էին, որ Ադրբեյջանը հզոր է, Նավթ ունի եւ այլն: Այսօր էլ ինչ-որ տեղ հոխորտում են, որ ժամանակին այսպիսի բան են ասել՝ ցավ չգալով կորուստների համար: Բայց եկեք հասկանանք՝ ինչպես է եղել, որ 1918-20թթ., երբ Ադրբեյջանի Նավթը շատ ավելի մեծ դերակատարություն ուներ եւ արաբական երկրների նավթը հայտնագործված չէր, հնարավոր դարձավ Ազգերի լիգայի կողմից դե ֆակտո ճանաչել Հայաստանի Հանրապետությունը: Բազմադարյա պատմություն ունեցող ազգերի հզորությունը նրա մեջ է, որ կարողանում են դասեր քաղել պատմությունից, որովհետեւ նույն իրավիճակներն են եղել զարգացման տարբեր փուլերում: Նոր ազգերը այդ հնարավորությունը չունեն:

Ուստի մենք պետք է փորձենք տեսնել մեր սխալները, դրանք ծնող պատճառները են դրանք իրականացնողներին: Այս երեքի համադրությամբ կարող ենք ճշմարտությունը հասնել:

Պատերազմից հետո ընկճվածությունը բնական է: Բայց փաստ է, որ պատերազմից հետո շատ կարճ ժամանակում վերականգնվեցինք, չեմ ասում՝ ամբողջովին: Յուրաքանչյուր պատերազմ սարսափելի է: Այսօրվա 35-ամյա երիտասարդը երեք պատերազմի է ականատես եղել, բայց տեսեք, թե ինչպես է հաղթահարում պատերազմի սինդրոմը: Համոզված եմ, որ պետք է առաջին հերթին Մայր հայրենիքում վերջ դնել պառակտման քաղաքականությանը: Պետք է լինեն ղեկավարներ, ովքեր իրենց հետեւից կտանեն ողջ ժողովրդին: Սա ամենահիմնական գործոնն է մեր ազգի միասնության համար:

Երբ հայ ազգը կարողանա միասնությունը հասցնել գագաթնակետին, այդ դեպքում շատ ավելի հեշտ կհաղթահարենք բոլոր դժվարությունները եւ կունենանք համահայկական նշանակության հաջողություններ:

Հարցազրույցը՝ Տաթևիկ ԱՂԱՋՆԱՅԱՆԻ

### Հայ կինը մեկ առաքելություն ունի. որքան հնարավոր է շատ զավակներ ծնել ու դաստիարակել ազգային ոգով

Որքան էլ աշխարհը զարգանում և գլոբալիզացվում է, անհետանում են պետական սահմանները, իսկ մարդիկ էլ փորձում են հետ չմնալ այդ խելագար հեծքից, հայ ազգը կարողանում է պահել իր ամբողջականությունը միմիայն ազգային դաստիարակության և պատմության շնորհիվ: Այդ դաստիարակության մեջ հատկապես վճռական է եղել հայ մայրերի դերը:

Ոչ մեկի համար էլ գաղտնիք չէ, որ մեր կանայք իրենց ուրույն դերն են ունեցել ոչ միայն ազգի հարատևման հենասայն՝ ընտանիքի ամրության ու ավանդույթների պահպանման գործում, այլև նույնիսկ ֆիդայական շարժման ժամանակ ծայրայտ հազուստներով տղամարդկանց հետ հավասար մասնակցում էին մարտերին:

Կանանց ունեցած դերակատարության մասին «Ապառաժ»-ը գրուցել է ՀՀ-ի Արցախի ԿԿ անդամ Ալյոնա Գրիգորյանի հետ, ումից նախ փորձեցինք հասկանալ հայ կնոջ ու մոր նշանակությունը, ինչին ի պատասխան՝ նա նշեց.

- ՀՀ-ի Արցախի երիտասարդական միության անդամակցության տարիներին, երբ բավականին ակտիվ էի երիտասարդական և հասարակական կյանքում, մի անգամ Արկարի Կարապետյանը (Դաշնակ Ազոն) ասաց, որ արժեք չունի իմ կատարած աշխատանքները, եթե չծնեն զավակներ և չդաստիարակեն այն նույն ոգով, որն իմ մեջ է: Այդ պահին շատ վիրավորվեցի՝ խոսքերն ընդունելով որպես նկատողություն, որովհետև այդ տարիներին՝ թվում էր, թե ես շատ կարեւոր հարցերով եմ զբաղված: Այսօր, երբ հետ եմ նայում, հասկանում եմ, թե որքան ճիշտ էր պարոն Կարապետյանը: Հայ կինը մեկ առաքելություն ունի. որքան հնարավոր է՝ շատ զավակներ ծնել ու դաստիարակել ազգային ոգով: Կարծում եմ՝ հայ կինը մայրանալուց հետո դադարում է լինել կին, նա դառնում է Հայ մայր:

**- Կանայք մեր պատմության տարբեր ժամանակահատվածներում տղամարդկանց հավասար դերակատարություն են ունեցել ռազմական և քաղաքական գործընթացներում, որոնք շրջադարձային նշանակություն են ունեցել մեր ժողովրդի համար: Ձեր կարծիքով, կանայք այսօր էլ նույն կերպ ներգրավված են նմանատիպ գործընթացների մեջ:**

- 44-օրյա պատերազմից հետո փորձել եմ հասկանալ մեր որոշ բացթողումների պատճառները, թե արդյոք մենք՝ կանայք, ունենք մեղքի մեր բաժինը, եւ արձանագրել, որ՝ այո, մեղքի մեծ բաժինը մերն է: Եթե կինը կարողացել է իր կողմից հանդուրժել նկուղում թաքնված, կամ հիվանդության տակ քողարկված ամուսին, ապա՝ այո, մենք շատ ենք հեռացել հայ կնոջ կերպարից: Տղամարդն առաջին հերթին իր կնոջ ու երեխաների աչքերում պետք է լինի հայ տղամարդ իր բոլոր չափանիշներով: Եթե հայ կինը կարողանում է իր կողքին հանդուրժել այդ տեսակ տղամարդու, ապա բնական է, որ արձանագրելու ենք այսպիսի կորուստներ: Ես սխալները երբեք չեմ կապում ժամանակների հետ: Բոլոր ժամանակներում էլ սխալներ եղել են, այստեղ հարցը պետք է դնել տոկոսային ինչ հարաբերակցության մեջ: Եթե այսօր ոչ հայ կինն է իր տեղում, ոչ հայ տղամարդը, ապա դրանում առաջին հերթին մեղավոր է տվյալ երկրում վարվող գաղափարական դաստիարակության ուղին: Երբ երկրի ներսում փոխվել է արժեքամակարգերը, ապա մեծացող սերունդը դրանում մեղավոր չէ: Երբ պատերազմի առաջին օրերին առաջինը ընտանիքը երկրից հանում է պետական պաշտոնյան, ապա չի կարելի մեղադրել ժողովրդին: Հայ կինն այսօր իր տեղում չէ: Հայ կինը, իմ կարծիքով, շատ է հեռացել հայ կնոջից:

**- Դուք, լինելով ՀՀ-ի Արցախի ԿԿ անդամ, զբաղեցնելով պետական պաշտոն, նաև ունենալով այդ ոլորտում աշխատելու փորձ, ինչպե՞ս եք գնահատում ստեղծված իրավիճակն ու ինչպիսի՞ սպասումներ ունեք ապագայից:**

- Պատերազմից հետո ինձ թվում էր, թե բոլորը կուղղեն իրենց նախկին սխալներն ու կփորձեն առավելագույնս ազնիվ ու հայրենասեր գործունեությամբ զբաղվել: Սակայն, այն իրականությունը, որի հետ բախվեցի, նույնիսկ ինձ էր ժամանակ հարկավոր եղել հոգեպես վերականգնվելու համար: Դժբախտաբար, պետք է արձանագրել, որ այսօր գրեթե ոչ մի պետական աշխատող ու պաշտոնյա չունի այն կարեւոր չափանիշները, որն անհրաժեշտ է մեր տեսակ պետությունների համար: Մատների վրա կարող ենք հաշվել բարոյական, ազգային ու պետական մտածողության

տեր պետական պաշտոնյաների ու ղեկավարների: Եթե այս կարեւոր չափանիշները պետական պաշտոնյաները չունենան, ապա՝ ինչ փոփոխություններ էլ կատարենք, անօգուտ է: Մի բանում վստահ եմ, ամեն ինչ լավ է լինելու, եթե ամեն մեկս մեզանից կախվածն անենք:

**- Արցախում պատերազմից հետո կյանքն ավելի ու ավելի է բարդացել: Ինչպիսի՞ ազդեցություն կարող են ունենալ մեր կանայք այս իրավիճակում:**

- Պատերազմ տեսած երկրում, բնական է, որ պետք է դժվարություններ լինեն ու դեռ լինելու են: Ու այդ երեւույթը չպետք է խուճապային մթնոլորտ ստեղծի, այլև ստիպի միջոցներ ու հնարավորություններ գտնել իրավիճակից դուրս գալու համար: Անելիքները շատ-շատ են. պետք է գիտակցենք, որ զրո կետից կորցրած սկսելու ենք կերտել՝ բացառելով նախկին սխալները: Նոր իրավիճակ է մեզ համար ստեղծվել, բայց պայքարի ուղին նույնն է մնացել: Այն, ինչ այսօր տեղի է ունենում, իրականում մեզ ավելի է ուժեղացնում: Սկզբից փորձել են որոշակի նյութական ծրագրերով մեզ պահել Արցախում, որը համարում եմ սխալ երեւույթ: Պետք է անկեղծ լինել մեր հասարակության հետ. պետք է ասել, թե մենք իրականում ինչ իրավիճակում ենք: Չի կարելի հասարակությանը խաբելով ապագա կերտել:



**- Ասում են՝ հայ մայրերի ավերի մեջ պետք է փնտրել փրկություն: Այսօր եւս արդիակա՞ն էք համարում այս թեզը:**

- Դա սկզբունք է, ու մենք շատ ենք հեռացել այդ սկզբունքից: Ավելին կարող եմ ասել. հայ մայրն է հեռացել իր սկզբունքներից, որի հիմնական պատճառն ազգային դաստիարակության ու կրթության բացակայությունն է: Անարդարության դեմ պայքարող երիտասարդությունը պետք է լինի, իսկ սերունդ դաստիարակողը, առաջին հերթին, մայրը: Մեր ամենամեծ զինանոցը մոր դաստիարակությունն է: Այս պատերազմը ցույց տվեց, որ մենք գործի խնդիր չունեինք, այլ՝ գործարարներ, իսկ գործարարներին ծնողը մայրն է: Վերջերս շատ եմ առնչվում երիտասարդ կանայք հետ, որոնք մեջ ոչ թե հայրենասիրություն են բացակայում, այլ՝ հայրենամատնությունը: Եթե այսօր Արցախում ամուսնություններ են տեղի ունենում ու երեխաներ են ծնվում, սա վկայում է հայ կնոջ՝ այս հողում ապրելու վճռական լինելու փաստը: Մնացած անելիքներն արդեն պետական կառավարման ու ազգային կրթության ճիշտ ընթացքի մեջ դնելու հարց է:

**- Այս 30 տարիների ընթացքում սերունդների դաստիարակության մեջ ունեցել ենք բացթողումներ: Իսկ պատերազմից հետո ինչպիսի՞ դաստիարակություն պետք է տրվի նոր սերունդին:**

- 30 տարիների ընթացքում մենք եղել ենք հաղթանակած, որը, դժբախտաբար, հղիացրել է ոմանց, ովքեր որոշակի դերակատարություն են ունեցել այդ հաղթանակի կերտման գործում: Ստեղծել ենք հերոսներ, ովքեր չեն ապրել ու գործել հերոսին վայել կյանքով, ովքեր վատ օրինակ են հանդիսացել երիտասարդության կայացման ճանապարհին: Դժբախտաբար, այ-

սօր էլ ենք տեսնում հղիացած, այսպես ասած՝ «լավ կռվող» տղաների, որոնց երբեմն ուզում եմ մի լավ խոսք ասել: Երկու տարի է ատամներս սեղմած ապրում եմ, փորձում եմ զուսպ լինել, որ չասես, հարագատ է կորցրել ու դրանից չարացել է, բայց մյուս կողմից էլ՝ եթե լուրն ես արատավոր երեւույթներ տեսնելով, նպաստում ես ավելի մեծ արատավոր երեւույթի ծնվելուն: Դաստիարակության առումով՝ ասել ու շարունակում եմ ասել. մեր գաղափարախոսությունը՝ Հայ Դատը, հայ ժողովրդի ազատագրական պայքարը պետք է դարձնել դպրոցներում ուսուցման առարկա եւ ամենօրյա ռեժիմով դասավանդել մեր սերունդներին: Հասարակության շատ քիչ տոկոսը գիտի դրա մասին: Երբ փորձում ես բացատրել, պատճառաբանում եմ, որ դու Դաշնակցական ես: Երբ բացատրում ես, որ դա մեր ազգային գաղափարախոսությունն է, համոզվում ես, որ մենք այն մատուցող չունենք, իսկ դա ոչ թե քաղաքական կուսակցությունների խնդիր է, այլ պետական մակարդակով տարվող գաղափարական դաստիարակության խնդիր:

**- Երիտասարդությունը եւս մեծ ազդեցություն կարող է ունենալ շատ հարցերում: Այսօր ինչպե՞ս եք գնահատում Արցախի երիտասարդական դաշտի ակտիվությունը: Արդյո՞ք այն բավարար է:**

- Արցախում ամենաբարձրի միջավայրում գտնվող մարմիններից մեկը երիտասարդության հարցերով զբաղվող պետական մարմինն է: Մինչ պատերազմը արշավների կամ ճամբարների տեսքով գոնե տեսնում էինք որոշակի աշխատանք, բայց պատերազմից հետո, որը պետք է ամենակտիվ ու ամենազբաղված չի ցանկանում որեւէ քաղաքական ուժի հետ առնչվել: Ուսանողական միությունները չեն աշխատում, չեն պայքարում: Այսօր ամեն ինչ արվում է ավելի շատ ի ցույց դնելու համար, իսկ երբ պետք է սեփական դեմքով ներկայանալ, չկան այդ դեմքերը: Ուսանողների հետ պետք է ամենօրյա ռեժիմով աշխատանք տանել. ամենատեղյակ զանգվածը ուսանողներն են, բացառությամբ՝ այն ուսանողների, ովքեր անդամագրված են որեւէ կառույցում:

Այս համընդհանուր կացության կողքին, սակայն, պետք է նշել, որ ունենք ակտիվ ու խելացի երիտասարդներ, ովքեր ստեղծում են ու ստեղծագործում Արցախում: Հիանում եմ այդ նպատակասլաց ու ինքնակրթությամբ զբաղվող երիտասարդներով: Նրանք էլ դառնալու են մեր երկրի շարժիչ ուժը հետագայում: Պետք է կարողանալ երիտասարդությանը լսել ու հնարավորություն տալ ստեղծելու եւ սխալվելու: Այդ՝ սխալվելու, որովհետև երիտասարդն իրավունք ունի սխալվելու, հենց սխալների վրա էլ սովորելու: Ոչ թե սխալ ապրող մարդուն դնել ղեկավար ու պահանջել ճիշտ կառավարում:

**- Ինչո՞վ պետք է զբաղվի արցախում ապրող երիտասարդը եւ որը պետք է լինի նրա առաջնային անելիքը:**

- Արցախում ապրող երիտասարդը պետք է ապրի Արցախով: Արցախում ապրող ամեն մի երիտասարդ արդեն իսկ գիտի իր անելիքը: Մեծ հաշվով, մեզանից առաջին հերթին պահանջվում է այստեղ ապրել ու ճիշտ ապրել: Չեմ կարծում, որ այսօր Արցախում զբաղվածության խնդիր կա: Մեծից փոքր՝ բոլորն ստեղծում են: Մեկ-մեկ նույնիսկ անհանգստանում եմ, թե դպրոցական նստարանից աշակերտն ինչու է ուզում այսօր աշխատանք գտնել: Այդքան կեցության հարց չկա, իրականում շատ ենք նյութական արժեքների հետեւից ընկել: Ինչով էլ զբաղվի Արցախում ապրող երիտասարդը, պետք է ազնվությամբ ու սեփական քրտինքով վաստակի, որովհետև մեր մեծերը միշտ ասել են, որ հարամ ճանապարհով վաստակածը գալիս է հալալ էլ հետը քշում, տանում:

Ես չեմ ընդունում, երբ շատերն ասում են՝ երջանիկ ենք ապրել մինչև պատերազմը, բայց չենք գնահատել: Իր կյանքը գնահատող մարդը միշտ էլ գնահատում է այն, նույնիսկ՝ պատերազմի ժամանակ: Պարզապես պետք է արժեւորենք ու կարեւորենք ամեն մի օրը, ու, որպես Արցախում բնակվող հայրողի, հարց տանք յուրաքանչյուրս մեզ, թե ինչ ենք այսօր արել Արցախի ու մեր կյանքն ավելի լավ դարձնելու համար:

**Վահագն ԽԱՉՏՐՅԱՆ**

«Արցախի ժողովրդավարական» կուսակցության 2021թ. ֆինանսական միջոցների, աղբյուրների եւ ծախսերի, գույքի մասին հաշվետվություն եւ անկախ աուդիտորական եզրակացություն



Աուդիտորի պատասխանատվությունը Հաշվետվության աուդիտի համար

Արցախի ժողովրդավարական կուսակցություն

2021թ. ֆինանսական միջոցների աղբյուրների և ծախսերի, ինչպես նաև գույքի մասին հաշվետվություն և

Անկախ Աուդիտորական եզրակացություն

ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏ Մարտ 2022թ.



Աուդիտ Պրո ՓԲԸ ԱՀ, ք. Սյրեվանսկերտ Կ. Մամիկոնյան 29/6

+ 37447 959575 www.auditpro.am

ԱՆԿԱԽ ԱՈՒԴԻՏՈՐԻ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Արցախի ժողովրդավարական կուսակցության ղեկավարությանը

Կարծիք

«Կուսակցությունների մասին» Արցախի Հանրապետության օրենքին համապատասխան մենթ աուդիտի ենթ ենթարկել Արցախի ժողովրդավարական կուսակցության (այսուհետ՝ Կուսակցություն) ֆինանսական միջոցների աղբյուրների և ծախսերի, ինչպես նաև գույքի մասին հաշվետվությունը՝ 2021թ. հունվարի 1-ից դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածի համար (այսուհետ՝ Հաշվետվություն):

Մեր կարծիքով, կից 2021թ. Հաշվետվությունը, ներառելով Կուսակցության հաշվում մուտք արված և ծախսված դրամական միջոցների, Կուսակցության անշարժ և շարժական գույքի, ինչպես նաև օտարված կամ դուրս գրված գույքի վերաբերյալ տեղեկատվությունը, տալիս է դրանց վերաբերյալ ճշմարիտ և իրական պատկերը՝ համաձայն Արցախի Հանրապետության կառավարության 2019թ. դեկտեմբերի 19-ի թիվ 1082-Ն որոշման:

Կարծիքի հիմք

Մենք աուդիտն անցկացրել ենք Աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՍ-ներ) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը լրացուցիչ նկարագրված է այս եզրակացության «Աուդիտորի պատասխանատվությունը Հաշվետվության աուդիտի համար» բաժնում: Մենք անկախ ենք Հիմնադրամից՝ համաձայն Հաշվապահների էթիկայի միջազգային ստանդարտների խորհրդի կողմից հրապարակված Պրոֆեսիոնալ հաշվապահի էթիկայի կանոնագրի (ՀԷՄՍ կանոնագիրը) և պահպանել ենք էթիկայի այլ պահանջները՝ համաձայն ՀԷՄՍ կանոնների:

Մենք համոզված ենք, որ ձեռք ենք բերել բավականաչափ համապատասխան աուդիտորական ապացույցներ՝ մեր կարծիքն արտահայտելու համար:

Հաշվետվության համար ղեկավարության և կառավարման օղակներում գրնվող անձանց պատասխանատվությունը

Կուսակցության ղեկավարությունը պատասխանատու է Հաշվետվության կազմման և ճշմարիտ ներկայացման, և այնպիսի ներքին հսկողության համար, որն ըստ ղեկավարության անհրաժեշտ է խարդախության կամ սխալի հետևանքով էական խեղաթյուրումներից զերծ հաշվետվությունների պատրաստումը ապահովելու համար:

Կառավարման օղակներում գտնվող անձինք պատասխանատու են Հաշվետվության պատրաստման գործընթացի նկատմամբ վերահսկողության համար:

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում առ այն, որ Հաշվետվությունը, ամբողջությամբ վերցրած, զերծ է խարդախության կամ սխալի հետևանքով առաջացած էական խեղաթյուրումներից և ներկայացնել մեր կարծիքը ներառող աուդիտորի եզրակացություն:

Ողջամիտ հավաստիացումը բարձր մակարդակի հավաստիացում է, բայց այն չի երաշխավորում, որ ԱՄՍ-ներին համապատասխան իրականացված աուդիտը միշտ կհայտնաբերի էական խեղաթյուրումը, երբ այն առկա է: Խեղաթյուրումները կարող են առաջանալ սխալի կամ խարդախության արդյունքում, և համարվում են էական, երբ խեղաթյուրումն կարող է ակնկալվել, որ դրանք առանձին կամ միասին վերցրած, կազդեն Հաշվետվության օգտագործողների՝ այդ Հաշվետվության հիման վրա կայացվող որոշումների վրա:

ԱՄՍ-ների համաձայն իրականացրած աուդիտի ողջ ընթացքում կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում մասնագիտական կասկածամտություն: Ի լրումն՝

- հատկորոշում և գնահատում ենք խարդախության կամ սխալի հետևանքով Հաշվետվությունում էական խեղաթյուրման ռիսկերը, նախագծում և իրականացնում ենք աուդիտորական ընթացակարգեր՝ այդ ռիսկերին արձագանքելու նպատակով, և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ, որոնք բավարար համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքի համար: Խարդախության հետևանքով առաջացած էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկն ավելի բարձր է, քան սխալի հետևանքով էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, զեղծարարություն, միտումնավոր բացթողումներ, սխալ ներկայացումներ կամ ներքին հսկողության համակարգի չարաշահում:

- ձեռք ենք բերում աուդիտին վերաբերող ներքին հսկողության մասին պատկերացում՝ տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր նախագծելու, և ոչ թե Կուսակցության ներքին հսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար:

- գնահատում ենք հաշվապահական հաշվառման կիրառված քաղաքականության տեղին լինելը, ինչպես նաև ղեկավարության կողմից կատարած հաշվապահական հաշվառման գնահատումների և կից բացահայտումների խեղամտությունը:

- եզրահանգում ենք ղեկավարության կողմից հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքի կիրառման տեղին լինելու վերաբերյալ, և հիմնվելով ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա, գնահատում ենք, արդյոք առկա է էական անորոշություն դեպքերի կամ իրավիճակների վերաբերյալ, որոնք կարող են նշանակալի կասկած հարուցել Կուսակցության անընդհատ գործելու կարողության վրա: Եթե մենք եզրահանգում ենք, որ առկա է էական անորոշություն, ապա մեզանից պահանջվում է աուդիտորի եզրակացությունում ուշադրություն հրավիրել Հաշվետվությունում համապատասխան բացահայտումներին, կամ, եթե այդպիսի բացահայտումները բավարար չեն, ձևափոխել մեր

կարծիքը: Մեր եզրահանգումները հիմնված են մինչև մեր եզրակացության ամսաթիվը ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա: Սակայն, ապագա դեպքերը կամ իրավիճակները կարող են ստիպել դադարեցնել անընդհատության սկզբունքի կիրառումը:

- գնահատում ենք ընդհանուր առմամբ Հաշվետվության ներկայացումը, կառուցվածքը և բովանդակությունը, ներառյալ բացահայտումները, և արդյոք Հաշվետվությունը ներկայացնում է դրանց հիմքում ընկած գործարքներն ու իրադարձություններն այն ձևով, որն ապահովում է ճշմարիտ ներկայացումը:

- Ի թիվս այլ հարցերի, մենք տեղեկացնում ենք կառավարման օղակներում ներգրավված անձանց առաջադրանքի պլանավորված շրջանակի և ժամկետների, ինչպես նաև աուդիտի ընթացքում հայտնաբերված նշանակալի հարցերի, ներառյալ՝ ներքին հսկողությանը վերաբերող նշանակալի թերությունների մասին:

07 մարտի 2022թ. «ԱՈՒԴԻՏ ՊՐՈ» ՓԲԸ

Արսեն Խաչատրյան Տնօրեն



Անուշ Մարտիրոսյան Աուդիտոր

**«Արցախի ժողովրդավարական» կուսակցության 2021թ. ֆինանսական միջոցների, աղբյուրների եւ ծախսերի, գույքի մասին հաշվետվություն եւ անկախ աուդիտորական եզրակացություն**

ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱՐԺԱԿԱՆ ԳՈՒՅՔԸ


Արցախի ժողովրդավարական կուսակցության ֆինանսական միջոցների աղբյուրների և ծախսերի, ինչպես նաև գույքի մասին հաշվետվություն՝ 2021 թվականի հունվարի 1-ից դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածի համար

ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱՇՎՈՒՄ ՄՈՒՏՔ ԱՐՎԱԾ ԵՎ ԾԱՆՍԱԿԱԾ ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ

Աղբյուրները	Քանակը	Արժեքը (հազ. դրամ)	Հատկացման ձևը (կանխիկ/փոխանցում, բանկային հաշիվ/դրամարկ)	Այլ տվյալներ
1. Նախորդ տարվանից առաջացած մնացորդը հունվարի 1-ի դրությամբ		1 711,2		
2. Մուտքի վճարներ				
3. Անդամակցության վճարներ				
4. Ֆիզիկական անձանց նվիրատվություններ (նշել նվիրատուի անունը, հայրանունը, ազգանունը, բնակության վայրը)				
1)				
2)				
3)				
5. Իրավաբանական անձանց նվիրատվություններ (նշել նվիրատուի անվանումը, գտնվելու վայրը)				
1)				
2)				
3)				
6. Օրենքով նախատեսված կարգով ստացված բյուջետային ֆինանսավորում		2 940,0	փոխանցում	
7. Քաղաքացիական իրավական գործարքներից և օրենսդրությամբ չարգելված այլ մուտքերից (նշել գործարքը կամ աղբյուրը)		15,0		
1) Առուվաճառքի պայմանագիր				
2) Նպաստ				
3) Այլ մուտքեր		15,0	փոխանցում	
8. Ընդամենը մուտք արված դրամական միջոցներ		2 955,0		

Աղբյուրները	Քանակը	Արժեքը (հազ. դրամ)	Գույքի անվանումը, մակնիշը և սերիան, թողարկման տարեթիվը	Այլ տվյալներ
1. Առկա շարժական գույքը հաշվետու տարվա հունվարի 1-ի դրությամբ	1	1 000,0	Ավտոմեքենա (Mitsubishi Outlander 3.0)	
	2	576,0	Համակարգիչ	
	9	1 605,2	Սեղան	
	25	1 460,0	Բազկաթոռ	
	5	514,8	Պահարան	
	2	297,6	Կահույք	
	1	200,0	Օդորակիչ	
	2	182,0	Պրինտեր	
	1	220,0	Հեռուստացույց	
48	6 055,6			
2. Ֆիզիկական անձանց նվիրատվություններ (նշել նվիրատուի անունը, հայրանունը, ազգանունը, բնակության վայրը)				
1)				
2)				
3)				
3. Իրավաբանական անձանց նվիրատվություններ (նշել նվիրատուի անվանումը, գտնվելու վայրը)				
1)				
2)				
3)				
4. Քաղաքացիական իրավական գործարքներից և օրենսդրությամբ չարգելված այլ մուտքերից (նշել գործարքը կամ աղբյուրը)		169,9		
1) Առուվաճառքի պայմանագիր	1	169,9	Օդորակիչ HISENSE	
2)				
3)				
5. Ընդամենը	48	6 225,5		

Արցախի ժողովրդավարական կուսակցության նախագահ Աշոտ Ղուլյան



18. Ընդամենը ծախսված դրամական միջոցներ		3 705,7		
19. Մնացորդը տարվա վերջում		960,5		

Արցախի ժողովրդավարական կուսակցության նախագահ Աշոտ Ղուլյան

ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԸ

9. Ֆիզիկական անձանց տրված վճարներ (աշխատավարձ, ծառայությունների մատուցման վճարներ)		844,4		
1) Ֆիզիկական անձանց տրված վճարներ (աշխատավարձ, ծառայությունների մատուցման վճարներ)		844,3	փոխանցում	
10. Սոցիալական վճարներ		62,9	փոխանցում	
11. Գույքի վարձակալության վճար (նշել գույքի անվանումը, վարձակալության ժամկետները)				
1)				
2)				
3)				
12. Կոմունալ վճարումներ (նշել կոմունալ սպասարկման անվանումը)		707,1		
1) Հեռախոսակապի ծառայություն		213,0	փոխանցում	
2) էլ. էներգիա		178,1	փոխանցում	
3) Գազ		279,4	փոխանցում	
4) Ջուր		25,1	փոխանցում	
5) Աղբահանում		11,5	փոխանցում	
13. Հարկեր և տուրքեր (նշել հարկատեսակը)		211,8		
1) Եկամտային հարկ		105,1	փոխանցում	
2) Գույքահարկ		65,2	փոխանցում	
3) Դրոշմակիցային վճար		41,5	փոխանցում	
14. Գույքի ձեռքբերման համար կատարված ծախսեր (նշել գույքի անվանումը և քանակը)		169,9	փոխանցում	
15. Տրանսպորտային ծախսեր				
16. Գործուղման ծախսեր		350,0	փոխանցում	
17. Այլ ծախսեր		1 509,6		
1) Վառելիքի և նորոգման ծախսեր		806,8	փոխանցում	
3) Գրասենյակային ծախսեր		149,8	փոխանցում	
4) Ապահովագրական ծախս		31,0	փոխանցում	
6) Կապի սպասարկում		144,0	փոխանցում	
9) Աուդիտի ծախս		150,0	փոխանցում	
1) Ավտոմեք. վճարման ծախս		60,0	փոխանցում	
7) Այլ ծախսեր		18,0	փոխանցում	


Աղբյուրները	Քանակը	Արժեքը (հազ. դրամ)	Գույքի անվանումը, հասցեն, համառոտ նկարագիր, չափսերը	Այլ տվյալներ
1. Առկա շարժական գույքը հաշվետու տարվա հունվարի 1-ի դրությամբ				
2. Ֆիզիկական անձանց նվիրատվություններ (նշել նվիրատուի անունը, հայրանունը, ազգանունը, բնակության վայրը)				
1)				
2)				
3)				
3. Իրավաբանական անձանց նվիրատվություններ (նշել նվիրատուի անվանումը, գտնվելու վայրը)				
1)				
2)				
3)				
4. Քաղաքացիական իրավական գործարքներից և օրենսդրությամբ չարգելված այլ մուտքերից (նշել գործարքը կամ աղբյուրը)				
1)				
2)				
3)				
5. Ընդամենը				

Արցախի ժողովրդավարական կուսակցության նախագահ Աշոտ Ղուլյան

ՕՏԱՐՎԱԾ ԿԱՄ ԴՈՒՐՍ ԳՐՎԱԾ ԳՈՒՅՔԸ

Գույքի անվանումը	Քանակը	Արժեքը	Օտարման ձևը	Այլ տվյալներ
1)				
2)				
3)				

Արցախի ժողովրդավարական կուսակցության նախագահ Աշոտ Ղուլյան



### Ազատամարտիկ Կարինե Աղեկյան



գային թեթեւ առկտ եւ դիպուկահար Կարինե Աղեկյանը ծնվել է 1958թ. փետրվարի 10-ին Երեւանում:

1979թ. ավարտել է ֆիզիկական կուլտուրայի հայկական պետական ինստիտուտը:

1989-1994թթ. տարբեր կամավորական ջոկատների կազմերում մասնակցել է Հայաստանի եւ Արցախի մի շարք շրջանների ինքնապաշտպանական եւ ազատագրական մարտերին:

Ըստ Գորիսի տարածաշրջանի ԵԿՄ նախագահ Յ. Արյանի՝ Կարինե Պարտուհի Աղեկյանը 1991-ից մինչև 1994թ. մայիսյան զինադադարը եղել է Շուշուի եւ Որոտան կամավորական ջոկատում: Ակտիվ մասնակցություն է ունեցել ՀՀ սահմանների պաշտպանությանը, այդ թվում՝ Շուշուի, Որոտան, Խնձորեսկ, Տեղ, Կորնիձոր, Խոզկավար գյուղերի պաշտպանությանը:

1992թ. մայիսի 5-ից մինչև 1992թ. հոկտեմբերի 26-ը մասնակցել է Բերձորի, Սաֆյանի եւ մի շարք այլ բնակավայրերի ազատագրմանը:

1993թ. մասնակցել է Սանասարի ազատագրմանը:

1993թ. դեկտեմբերի 25-ին մասնակցել է Ջրականի ազատագրմանը:

1994թ. հունվարի 5-ից մինչև 1994թ. ապրիլի 24-ը մասնակցել է Հորադիզի, Շուքուրբեյի ազատագրմանն ու պաշտպանությանը:

2016թ. մասնակցել է ապրիլյան քառօրյա պատերազմին, եղել է «Եղնիկներ»-ում:

2020թ. մասնակցել է 44-օրյա պատերազմին:

Կարինե Աղեկյանը մի քանի անգամ վիրավորվել, ապա ապաքինվել է վերադարձել է մարտադաշտ:

1993-ից ընտանիքով հաստատվել է ԱՀ Զառթաթի շրջանի Աղավնո գյուղում:

Աղավնո համայնքի ղեկավար Անդրանիկ Զավուշյանի խոսքով՝ Կարինե Աղեկյանը երկար տարիներ աշխատել է Աղավնոյի միջնակարգ դպրոցում՝ որպես գինղել:

«Մասնակից է եղել բոլոր երեք պատերազմներին էլ, սակայն պատերազմից հետո հիվանդացել եւ մահացել է: Մինչև պատերազմի վերջին օրը գեներալ ճեղքի գյուղում էր, իսկ դրանից առաջ իրենց ջոկատի հետ Ջրականում մարտերի է մասնակցել», - նշել է Ա. Զավուշյանը:

Կարինե Աղեկյանի միջնակարգ դուստրը՝ Աննա Թադեոսյանը, «Ապառաժ»-ի հետ զրույցում նշեց, որ իրենց ընտանիքը

1993-ին է հաստատվել Աղավնոյում, իսկ նախքան այդ, 1989-ից դուրս են եկել Երեւանից: Կարինե Աղեկյանը իր երեխաների հետ ջոկատի կազմում մեկնել է Սյունիք, այնտեղից էլ տարբեր մարտական գործողությունների մասնակցելով՝ աստիճանաբար հասել Աղավնո:

«Մենք 3 քույր էինք: Ամեն ինչ այնքան էլ լավ չէմ հիշում, բայց հիշում եմ, որ մայրս մեզ թողնում էր Սյունիքի գյուղերից մեկի մանկապարտեզում, իսկ ինքը ջոկատի հետ մեկնում ռազմական գործողությունների մասնակցելու», - նշում է Աննա Թադեոսյանը:

Կարինե Աղեկյանը դուստրերին առաջին պատերազմի ժամանակ պատմում էր թուրքերի հնարավոր դաժանությունների մասին եւ սովորեցնում, թե ինչ պետք է անեն, եթե հանկարծ գերի ընկնեն:

«1992թ. մայիսի 2-ն էր, շատ լավ հիշում եմ՝ ձևառատ օր էր, եւ Գորիս-Կապան ճանապարհը փակվել էր, իսկ մենք 3 քույրերով մայրիկի հետ սարերում էինք: Նա այդ ժամանակ մի նռնակ տվեց՝ ասելով՝ գիտեք ինչ պետք է անեք: Բարեբախտաբար, այն գործածելու անհրաժեշտություն չկար», - ասում է Ա. Թադեոսյանը:

Արմատներով լինելով Մուշից, Կարինե իր նախնիներից է ժառանգել հայրենասիրությունն ու ռազմական գործի նկատմամբ հակումը:

«Նա մեզ էլ է փոխանցել այդ հայրենասիրությունը: Նա ասում էր, որ հայն իր երկրին է պետք, հայը պետք է պայքարի, հայը պետք է հաղթի», - նշում է Ա. Թադեոսյանը:

Նրա խոսքով՝ կապ չունի, որ իրենց աղջիկ էին, իրենք էլ իրենց հերթին պետք է ներդրում ունենային այս երկրի համար:

«Մենք եկել էինք Աղավնո ոչ թե գոյության կռիվ տալու, այլ ապրելու, ծառ տնկելու, քարը քարի վրա դնելու, ու կապ չունի, որ մենք աղջիկ երեխաներ էինք, մենք այդ դաստիարակությունն էինք ստացել», - ասում է Ա. Թադեոսյանը:

Աննա Թադեոսյանը 44-օրյա պատերազմի օրերին էլ մոր օրինակով փորձել է օգտակար լինել պատերազմի մեջ գտնվող հարազատ երկրին: Նա մոր նման մինչև պատերազմի վերջին օրը եղել է Արցախում:

«Ես մինչև վերջին օրը Ստեփանակերտում էի, եւ զինվորների համար հաց էինք թխում: Մայրս հաճախ էր փորձում համոզել ինձ, որպեսզի լքեմ Արցախը, սակայն ես նրան հարցնում էի՝ արդյո՞ք նա կլքեր իրեն վատահիված մարտական դիրքը, մե-

նակ կթողներ իր զինակիցներին եւ կգնար, իսկ նա պատասխանում էր՝ ոչ, ինչպե՞ս կարող է լքել իր զինվորին: Ես էլ ասում էի, որ սա էլ իմ դիրքն է, եւ կապ չունի, թե ինչ զինատեսակով եմ կրակում», - նշում է Ա. Թադեոսյանը:

Նրա խոսքով՝ այս պատերազմին եւս Կարինե Աղեկյանն իր ջոկատի հետ Ջրականում մասնակցել է մարտական գործողություններին, սակայն պատերազմից վերադարձել է կոտրված: Մասնակցել է Քաշաթաղի պաշտպանությանը, այնուհետեւ պատրաստվում էր գեներալ ճեղքի պաշտպանել Աղավնոն, եւ չէր պատրաստվում լքել գյուղը, անգամ եթե այն պետք է գրավվեր թշնամու կողմից:

Կարինե Աղեկյանը մահացել է 2021 թվականի հունվարի 29-ին, 63 տարեկան հասակում՝ սրտի կաթվածից: Ամփոփվել է «Եռաբլուր» զինվորական պանթեոնում:

«Նա մայր էր, որի սիրտը չհիմացավ Արցախի կորստին», - նշել է Ա. Թադեոսյանը:

Կարինե Աղեկյանը պատերազմից հետո ռեպորտաժում ասել էր, թե մղկտում է իր սիրտը, երբ նայում է Արցախի դրոշին: «Ի՞նչ արեցին մեր ղեկավարները: Սկուտեղի վրա նվեր տվեցին Երողանի», - ասել է Կ. Աղեկյանը:

Նրա խոսքով՝ գյուղն իր բնակիչներով է գյուղ, եւ եթե պետք լիներ, իրեն կպայթեցներ իր տան մեջ, սակայն գերի չէր ընկնի:

Նա զարմանում էր իր վրա, որ չի խելագարվել: «Աչքերիս դիմաց մեր զինվորները օդի մեջ կտոր կտոր են եղել, իսկ դա տեսե՞լ եմ մեր ղեկավարները», - ասել է նա:

Կարինե Աղեկյանը ոգեշնչվել էր իր հորեղբայրներից, ովքեր եղել են Անդրանիկի զինվորները, իսկ իր 7 թոռնիկների համար ոգեշնչման ու հպարտության աղբյուր դարձավ հենց ինքը՝ Կարինեն, սեփական օրինակով ցույց տալով իր նվիրվածությունը հայրենիքին:

Կարինե Աղեկյանը հայրենիքի պաշտպանության գործում ունեցած մեծ ավանդի համար պաշտպանական մի շարք գերատեսչությունների կողմից արժանացել է ԼՂՀ «Մարտական ծառայություն», ՀՀ «Չինված ուժերի «Վազգեն Սարգսյան», «Գրաստամատ Կանայան» մեդալների, ԵԿՄ «Եռասերունդ երկրպագի», «Հայաստանի երկրպագի» եւ մի շարք այլ հուշամեդալների եւ պատվոգրերի:

Վահագն ԽԱՉԱՏՐՅԱՆ

## Մեր պատմամշակութային ժառանգությանը հասցվում է հերթական ցավալի հարվածը. Լեռնիկ Յոփանսիայան

Վերջին օրերին հաճախ է խոսվում Փառուխ գյուղի եւ Զարագուխ կոչվող բարձունքի ռազմավարական նշանակության մասին: Մարտի 24-ից տեղանքն ադրբեջանցիների կողմից օկուպացվել է, ինչն ուղիղ սպառնալիք է Արցախի ու արցախցիների անվտանգության համար:

Փառուխ-Զարագուխ տեղանքը, սակայն, անչափ կարեւոր է նաեւ Արցախի պատմամշակութային ժառանգության տեսանկյունից: Զարագուխը գտնվում է Ասկերան քաղաքից 10 կմ հյուսիս-արեւմուտք, Շիկաքար կոչվող ժայռի շրջակայքում: Գյուղի Շիկաքար բերդը պատմական կարեւոր վայրերից է եւ նշանակալի դեր է խաղացել Արցախի պաշտպանության գործում: Հին ժամանակներում այն եղել է հալեմի նշանավոր բնական բերդերից մեկը:

2011թ. ԱՀ կառավարության որոշմամբ՝ Փառուխի պատմամշակութային հուշարձանները ներառվել են Ասկերանի շրջանի պատմության եւ մշակույթի անշարժ հուշարձանների պետական ցուցակի մեջ: Ըստ այդմ, վերոնշյալ տարածքում կա ավելի քան 20 հուշարձան, այդ թվում՝ 2 եկեղեցի, հանրահայտ Շիկաքար-Զարագ-

լուխ ամրոցը, հնագիտական արժեք ունեցող մշակույթի հուշարձաններ, գերեզմանոցներ, մոնումենտալ արվեստի կոթողներ, մասնավորապես՝ խաչքարեր, տապանաքարեր: Այստեղ է գտնվում նաեւ Շիկաքարի քարանձավը, որտեղ 2011թ. հետազոտություն է կատարել Ազոխի միջազգային հնագիտական արշավախումբը:

ԱՀ ԿԳՄՍ նախարարի տեղակալ Լեռնիկ Յոփանսիայանի խոսքով, այդ տարածաշրջանում գտնվող՝ մեր մշակութային ժառանգության մի կարեւոր հատված այս պահին վտանգված է: «Վերոնշյալ տեղանքն առանձնանում է Արցախի դարավոր պատմությունն ու մեր ինքնությունը վավերագրող հարուստ պատմամշակութային արժեքներով: Տարածքն ավելի մանրամասն հետազոտության կարիք ունի, քանզի ընդամենը մի քանի ամիս առաջ «Պատմական միջավայրի պահպանության պետական ծառայություն» ՊՈԱԿ-ի կողմից այնտեղ հետազոտություններ են կատարվել եւ հայտնաբերվել են 20-ից ավելի նոր խաչքարեր: Սա փաստում է, որ Զարագուխը հավանաբար դեռ ունի չբացահայտված հուշարձաններ: Մեր մշակութային ինքնությանն ու պատմամ-

շակութային ժառանգությանը հասցվում է հերթական ցավալի հարվածը, խաթարվում է պատմական լանդշաֆտը, ինչը մեր ժողովրդի ինքնության վկայություններից է:

Հաշվի առնելով Ադրբեջանի կողմից Արցախի նկատմամբ շարունակաբար տարվող մշակութային էթնոցիդի քաղաքականությունը, այն է՝ վերացնել հայկականության յուրաքանչյուր հետք, վստահ ենք, որ Զարագուխի տարածքում գտնվող մեր մշակութային ժառանգությունը վտանգված է:

Մեր խիստ մտահոգությունն ենք հայտնում եւ մշակութային ժառանգության պաշտպանությամբ զբաղվող միջազգային կազմակերպությունների ուշադրությունը հրավիրում այս խնդրին: Ադրբեջանի կողմից տարվող էթնոցիդի քաղաքականությունը չի փոխվել: Ադրբեջանական իշխանությունների անպատեղիությունը ծնում է նոր հանցանքներ, ինչն էլ տեղի է ունենում մեր աչքի առաջ ամեն օր՝ միջազգային հանրության լռության ներքո: Արցախի պատմամշակութային հարուստ ժառանգությունը պաշտպանության կարիք ունի»:

# Անընդհատ օգնություններ բաժանելով եւ շինարարության ոլորտը ֆինանսավորելով՝ երկիրը տնտեսապես չի կարող զարգանալ

Արցախի պետական համալսարանում դասախոսական գործունեություն է սկսել ծավալել 337 Բյուրոյի տնտեսական հետազոտությունների գրասենյակի պատասխանատու, տնտեսագետ Սուրեն Պարսյանը, ում հետ «Ապառաժ»-ը գրուցել է հետպատերազմյան Արցախում ստեղծված տնտեսական իրավիճակի եւ Արցախի տնտեսության վրա համաշխարհային տնտեսական ու քաղաքական զարգացումների հնարավոր ազդեցությունների մասին:

**- Պարոն Պարսյան, ԱրՊՀ-ում դասախոսական աշխատանքներ սկսելը պայմանավորված էր ոլորտում առկա կարգային պահանջի հետ:**

- Մինչ 44-օրյա պատերազմը եւ պատերազմից հետո մեծ ցանկություն կար աշխատել Արցախում: Վստահ եմ՝ միայն տնտեսապես զարգացնելով եւ սոցիալական արդարություն ապահովելով կարող ենք ունենալ հզոր Արցախ: Իսկ Արցախի զարգացման եւ անվտանգության ապահովման հիմնական հենասյուներից է դիմամիկ եւ ներառական տնտեսությունը: Մեր հարստությունը հայ մարդն է, ով պետք է լինի գրագետ, մրցունակ եւ իր հողին կառչած: Արցախում միայն որակյալ կադրեր պատրաստելը բավարար չէ նպատակին հասնելու համար: Մենք նաեւ սեփական օրինակով նրանց պետք է ցույց տանք, որ հնարավոր է բարեկեցիկ եւ ապահով ապրել նաեւ մեր հողի վրա: Միավորելով ստեղծագործ միտքը եւ հայրենատեր լինելով՝ կարող ենք կառուցել մեր երազած հայրենիքը:

**- Ինչո՞վ կտարբերեք Արցախում սովորող ուսանողներին 33 բուհերում սովորող ուսանողներից:**

Ես նաեւ դասավանդում եմ Երեւանում, եւ, իրոք, ինձ համար հետաքրքիր էր համեմատել Հայաստանի եւ Արցախի ուսանողների կարողությունները, առավելությունները: Ինձ համար հաճելի բացահայտում էր արցախցի ուսանողների մաթեմատիկական գիտելիքների բարձր մակարդակը, որը, անշուշտ, պայմանավորված է հանրակրթությամբ: Սա լավ հիմք է Արցախում բարձր արտադրողականություն եւ մրցունակություն ունեցող կադրեր պատրաստելու համար: Սակայն այդ ամենից հնարավոր չէ ամբողջությամբ օգտվել, եթե չկա ռիսկի գնալու ցանկություն, բիզնեսով զբաղվելու նպատակ: Ես հաճախ ուսանողների շրջանում հարցում եմ անում՝ պարզելու, թե ով է ցանկանում սեփական գործ հիմնել: Հայաստանում սովորող ուսանողների մոտ 40 տոկոսը նման ցանկություն է հայտնել, իսկ արցախցի ուսանողների՝ մոտ 10 տոկոսը: Անշուշտ, միայն ցանկություն ունենալը բավարար չէ բիզնես սկսելու համար, դրա համար նաեւ հարկավոր են համապատասխան կարողություններ: Բայց ակնհայտ է, որ Արցախի երեխաների մոտ որպես լավ աշխատանք դիտարկվում է պետական պաշտոնյայի, բժշկի կամ ուսուցչի աշխատանքը: Սեփական գործ սկսելու ցանկության վրա ազդել է նաեւ երկրի անվտանգության սպառնալիքներն ու անորոշությունը, ինչպես նաեւ մեծ թվով պետական հատվածի աշխատատեղերի առկայության գործոնը:

**- Ինչպիսի՞ն էր առաջին տպավորությունը ԱրՊՀ-ից:**

Արցախի համալսարանի ղեկավարությունը եւ ուսանողությունը ինձ շատ լավ են ընդունել, օժանդակել դասապրոցեսի կազմակերպման հարցերում: Կազմակերպական հարցերը շատ արագ են լուծվել, ինչը թույլ է տվել ինձ կենտրոնանալ բուն կրթական գործընթացի վրա: Հուսամ՝ դեռ հնարավորություն կունենամ նաեւ ծանոթանալու պրոֆետորադասախոսական կազմի հետ, եւ համատեղ հետազոտական ծրագրեր կի-

րականացնեք: ԱրՊՀ-ն ունի բավակա-նին հարուստ գրադարան, սակայն այն նեղ մասնագիտական գրականության համարման կարիք ունի: Ինքս այդ ուղղությամբ որոշ քայլեր արել եմ: Ինքս էլ նոր հմտություններ եմ ձեռք բերում ԱրՊՀ-ում: Մասնավորապես՝ ԱրՊՀ-ում արդյունավետ գործում է Classroom էլեկտրոնային հարթակը, որը թույլ է տալիս ուսանողների հետ հեռավար աշխատել, Նյութերով փոխանակվել, առաջադրանքներ տալ եւ այլն:

**- Արցախի տարածքի 75 տոկոսի կորուստը ինչպե՞ս է ազդելու ՀՆԱ-ի վրա: Կարո՞ղ եք արդյոք ապագայում ապահովել ՀՆԱ աճ, կամ գոնե առկա մակարդակ:**

- Հաշվի առնելով 44-օրյա պատերազմի ընթացքում Արցախի տնտեսության եւ տնտեսական կարողությունների զգալի կորուստները՝ 2021 թվականի ԱՀ պետական բյուջեով նախատեսված էր, որ 2021 թվականին 2020-ի համեմատ տնտեսական անկումը կազմելու է 15 տոկոս, սակայն ԱՀ ազգային վիճակագրական ծառայության կողմից հրապարակված տվյալների համաձայն՝ 2021 թվականի հունվար-սեպտեմբեր ամիսներին Արցախի տնտեսության անկումը կազմել է 26,4 տոկոս: Այսինքն՝ Արցախի կառավարությունը ի վիճակի չի եղել ապահո-

տոկոսը Ռուսաստանից: Հետեւաբար, Հայաստանի բնակչության հացի ապահովումն ուղղակի կախված է ռուսական ցորենի ներկրումից: Մինչեւ ռուս-ուկրաինական հակամարտությունը կանխատեսվում էր համաշխարհային շուկայում պարենի գների աճ, իսկ հիմա էլ ավելի մեծ գնած պետք է սպասել՝ նկատի ունենալով տնտեսական ցանկցիաներով ուղեցվող պատերազմը: Օրերս Ռուսաստանը հայտարարեց, որ արգելում է ռուսական ցորենի արտահանումը: ԵԱՏՄ անդամ երկրների, մասնավորապես Հայաստանի դեպքում ցորեն կարտահանվի ներքին սպառման չափով: Այս սահմանափակման նպատակը կայանում է նրանում, որ Հայաստանի միջոցով ռուսական ցորենը չվերարտահանվի Եվրոպական երկրներ: Կարելի է կանխատեսել, որ Հայաստանի եւ Արցախի բնակչությունը ցորենի դեֆիցիտ չեն ունենա, սակայն պարտադրված են լինելու ավելի շատ վճարել դրա համար: Ցավոք, Արցախի ցորենի արտադրության պոտենցիալը չենք կարողանում ամբողջությամբ օգտագործել ադրբեջանցիների սադրանքների պատճառով:

**- Ճանապարհների ապաշրջափակման պարագայում որո՞նք են Արցախի սպառնացող վտանգները:**

- Ճանապարհների ապաշրջափակումն ավելի շատ քաղաքական բաղադրիչ ունի, քան տնտեսական: Կողմերը տարբեր կերպ են դա հասկանում: Օրինակ, թուրքադրբեջանական տանդեմը փորձում է Քերձորով անցնող միջանցքի նման միջանցք ունենալ Սյունիքում, ինչը կտրուկ կթուլացնի Հայաստանի անվտանգությունը եւ սուվերենությունը: Չունե՞նա՞նք ապառաջները, իսկ պետությունը ուժով չի հեռացնում նրանց՝ հաշվի առնելով մարդասիրական իրավունքը:

մա վրացական ավտոմեքենաներն են Հայաստանի ճանապարհներից օգտվում, այնպես էլ ադրբեջանական ավտոմեքենաները կարող են օգտվել անվտանգային եւ մաքսային սուկուրության պայմաններում: Հայկական բեռները ադրբեջանական երկաթգծով տեղափոխելը կարող է դառնալ այլընտրանքային տարբերակ, սակայն եթե նոյեմբերի 9-ի համաձայնագրի համաձայն՝ ադրբեջանական ավտոմեքենաների անվտանգության երաշխավորը ռուսական կողմն է, ապա հայկական բեռների, ուղեւորների դեպքում որեւէ լրացուցիչ երաշխիք չկա:

**- Հնարավոր է Արցախում զարգացնել գյուղատնտեսությունը՝ հիմնական մշակվող հողերի կորստի պարագայում:**

- Արցախը կորցրել է իր վարելահողերի 80-90 տոկոսը, ինչը, անշուշտ, մեծ կորուստ է, սակայն մնացած վարելահողերի ինտենսիվ մշակման դեպքում լավ հնարավորություն ունենք ապահովելու պարենի ինքնաբավության բարձր մակարդակ: Դրա համար առաջնահերթ պետք է լուծել անվտանգության հարցը՝ միաժամանակ ֆինանսավորելով գյուղատնտեսական ծրագրերը:

**- Համաշխարհային ճգնաժամը ինչպիսի՞ ազդեցություն է ունենալու Արցախի տնտեսության վրա:**

- Ինչպես Հայաստանի, այնպես էլ Արցախի դեպքում Ռուսաստանը հանդիսանում է արտագնա աշխատանքի մեկնելու հիմնական երկրներից մեկը: Ռուբլու արժեզրկումն ուղղակի ազդել է Արցա-

խում ապրող ընտանիքների կենսամակարդակի վրա: Օրինակ, եթե արցախցի ընտանիքը, Ռուսաստանից ստանալով 1000 ռուբլի, կարողանում էր 7000 դրամի առետուր անել, ապա ներկայումս 3-4000 դրամի սահմաններում կարող է գնում կատարել: Բացի այդ, Արցախում ծառայություն իրականացնող ռուս խաղապահների աշխատավարձը վճարվում է ռուբլով, ինչը նշանակում է, որ ներկայումս նրանք իրենց աշխատավարձերով ավելի քիչ գնումներ կկարողանան անել Արցախի տարածքում: Այսինքն՝ ռուբլու արժեզրկման հետեւանքով էապես կտուժի Արցախի առետուրի եւ ծառայությունների ոլորտը: Ռուսաստանը հանդիսացել է նաեւ Արցախի արտահանման կարեւոր ուղղություններից մեկը, իսկ ռուբլու արժեզրկումը, ցավոք, կվնասի նաեւ արտահանման ծավալներին:

**- Որո՞նք են այն հիմնական քայլերը, որոնք անհրաժեշտ են Արցախի տնտեսության վերականգնման համար: Արդյո՞ք ԱՀ իշխանությունների կողմից վարվող քաղաքականությունը շինարարության ոլորտում նպաստելու է տնտեսության վերականգնմանը:**

- Արցախի թիվ մեկ խնդիրը արցախցուն Արցախում պահելն է, եւ բնակարանաշինության այս ծրագիրը չի կարող այդ խնդիրը արագ լուծել: Այդքան գումար ծախսելով տան եւ ճանապարհների վրա՝ պետք է հասկանալ՝ արդյո՞ք դրանց անվտանգությունը երաշխավորված է: Միգուցե այդ ահռելի գումարները ճիշտ է ծախսել բանակաշինության վրա, ինչը թույլ կտա մոտ ապագայում հետ բերել Արցախյան մի շարք շրջաններ եւ լուծել այդ հարցը: Այս հարցերի պատասխանը հստակ չկա: Միաժամանակ անընդունելի է, երբ այսքան տեղահանվածների պայմաններում Արցախում կան բնակարաններ, որոնք դատարակ են առ այսօր: Օրինակ՝ Ֆրանսիայում, Իսպանիայում օտարերկրյա ներգաղթյալներն առանց սեփականատիրոջ համաձայնության մուտք են գործում թրակտորային բնակարաններ, իսկ պետությունը ուժով չի հեռացնում նրանց՝ հաշվի առնելով մարդասիրական իրավունքը:

**- Նախքան պատերազմը ԱՀ-ն էլեկտրաէներգիա արտահանող երկիր էր: Այժմ գտնվելով շրջափակման մեջ, նաեւ Էներգետիկ անվտանգության եւ անկախության ապահովման խնդրի առջեւ է կանգնած Արցախը: Այս ոլորտում ինչպիսի՞ հեռանկարներ կան:**

- Մինչեւ պատերազմը ՀԵԿ-երի միջոցով էլեկտրաէներգիայի արտադրությունն ապահովում էր Արցախի տնտեսության դիմամիկ աճ, բայց այդ աճից, օգուտից օգտվում էր բնակչության շատ փոքր մասը: Արցախում գործող 36 ՀԵԿ-երն արտադրում էին էլեկտրաէներգիա ոչ միայն ներքին սպառման համար, այլ տարեկան մոտ 330 մլն կվտժ հոսանք էին արտահանում Հայաստան, որը կազմում էր Հայաստանի սպառման մոտ 5 տոկոսը: Ցավոք, ներկայումս Արցախի էներգետիկ համակարգը մեծ կախվածություն ունի Հայաստանից մատակարարվող հոսանքից, որը պարբերաբար խափանվում է ադրբեջանցիների ահաբեկչական գործողությունների հետեւանքով: Գազամատակարարման դեպքում նմանատիպ խնդիր կա, ինչի հետեւանքով Արցախի էներգետիկ անվտանգությունն էապես տուժում է: Իրավիճակը շտկելու համար պետք է դիտարկել նոր ՀԵԿ-երի կառուցումը, որը կնվազեցնի Հայաստանից էլեկտրաէներգիայի մատակարարումից կախվածությունը: Իսկ գազատարի մատով ռուսական կողմը Արցախի իշխանությունների հետ պետք է գտնի երկարաժամկետ լուծում, որպեսզի Արցախի բնակչությունը պարբերաբար չհայտնվի հումանիտար խնդիրների առաջ:

Կահազն ԿԱՉԱՏՐՅԱՆ



վել պլանային ցուցանիշները: Խոսքը մեկ-երկու տոկոս շեղման մասին չէ, այլ մոտ կրկնակի ավելի անկում է գրանցվել, հետեւաբար խիստ անհրաժեշտ է ամբողջությամբ վերանայել Արցախի տնտեսական, հարկաբյուջետային քաղաքականությունը: Անընդհատ օգնություններ բաժանելով եւ շինարարության ոլորտը ֆինանսավորվելով՝ երկիրը տնտեսապես չի զարգանա, եւ այդ զարգացումից հասարակության մեծ մասը չի օգտվի:

**- Պատերազմից առաջ հացահատիկի հիմնական պաշարները ստացվում էր Ադրբեջանի կողմից բռնազավթված տարածքներից, որի մի մասն արտահանվում էր նաեւ ՀՀ: Այսօր այլ պատկեր ունենք, եւ փաստորեն ստիպված ենք ներմուծել արդեն արտասահմանյան երկրներից, մասնավորապես՝ ՌԴ-ից: ՌԴ-ն, գտնվելով պատերազմական իրավիճակում, նաեւ համաշխարհային շուկայում նկատվող ցորենի գնաճը, կարո՞ղ է արդյոք պարենային ճգնաժամ առաջ բերել մեր երկրում:**

- Մինչեւ պատերազմը տարբեր հաշվարկներով Արցախն ապահովում էր հացահատիկի ինքնաբավությունը, ինչպես նաեւ 60-70000 տոննա ցորեն էր արտահանում Հայաստան: Համեմատության համար նշեմ, որ 2021 թվականին Հայաստանում արտադրվել է ընդամենը 97200 տոննա ցորեն, այսինքն՝ ցորենի ինքնաբավությունը կազմում է մոտ 18 տոկոսը: 2021 թվականի Հայաստան ներկրվել է շուրջ 270 հազար տոննա ցորեն, որի 99



# Ամենաբարձր պաշտոնը հենց հոգեւոր իշխանությունն է, որովհետեւ այն մարդկանց սրտերի հետ է կապված

Հայ առաքելական եկեղեցու տոնացույցի համաձայն՝ տարին բաժանվում է տոնական եւ պահոց օրերի: Պահոց 158 օրերի մեծ մասը կարճատե պահքեր են՝ օրապահքեր (չորեքշաբթի եւ ուրբաթ օրերը՝ ի հիշատակ Հիսուս Զրիստոսի մատնության եւ չարչարանքների) եւ շաբաթապահքեր, իսկ առավել ժողովրդականություն վայելող եւ ամենակարգաբար պահքը Մեծ կամ Զառասնորդական պահքն է: Այս տարի Մեծ պահքը սկսվել է փետրվարի 15-ին: Մեծ պահքի շրջանը նախորդում է Հիսուս Զրիստոսի Սուրբ Հարության տոնին եւ տեւում է 48 օր:

Մեծ պահքի խորհրդի, ներկա իրավիճակում եկեղեցու դերի եւ այլ հարցերի շուրջ «Ապառաժ»-ը գրուցել է Ստեփանակերտի սուրբ Աստվածածին մայր եկեղեցու հոգեւոր հովիվ Տեր Ներսես քահանա Արյանի հետ: Նա նշել է, որ Մեծ պահքը խորը ապաշխարության շրջան է, հոգեւոր ճանապարհորդություն, որը հավատացյալին աստիճան առ աստիճան նախապատրաստում է՝ մաքրագործելով մոտենալ սուրբ Հարության տոնին:

«Մեծ պահքից երեք շաբաթ առաջ սկսվում է Առաջավորաց պահքը, եւ տարին սկսում ենք ապաշխարությամբ: Առաջավորաց պահքը կարելու խորհուրդ ունի, որն սկսվում է անհատի ապաշխարության խորհրդից, այսինքն՝ Ադամի եւ Եվայի՝ առաջին մարդկանց ապաշխարության խորհուրդն ունի իր մեջ եւ հասցնում է մինչեւ նինվեացիների ապաշխարություն: Աստվածաշնչում, Հովան մարգարեի գրքում նինվեացիների պատմություն կա, երբ Աստված որոշում է, որ ինկվեն պետք է կործանվի, եւ Հովան մարգարեին ուղարկում է այնտեղ հստակ պատգամով՝ երեք օրից քաղաքը կործանվելու է: Մարդիկ իրենց մեղքերի համար ապաշխարում են, եւ կատարվում է բացառիկ երեւոյթ, երբ Աստված փոխում է իր կայացրած որոշումը՝ ողորմելով ապաշխարող քաղաքին», - ասում է քահանան՝ սուրբ Գրիգոր Լուսավորչի հաստատած Առաջավորաց պահքը դիտարկելով որպես յուրահատուկ փրկության բանալի: Նրա խոսքով՝ հիմա բոլորն իրար մեղադրում են, հայիտում, ծաղրում, մեղքը մեկը մյուսի վրա գցում, իսկ ապաշխարությունը փրկության ճանապարհ է ցույց տալիս:

Մեծ պահքի շրջանում ամեն կիրակի ունի իր խորհուրդը, ընդհանուր 7 կիրակիներ են՝ Բուն Բարեկենդանից մինչեւ Սուրբ Հարության տոն: «Հիմնականում չորս ազգակներ կամ հոգեւոր ճանապարհներ կան, որոնք գործնականորեն ցույց են տալիս, թե ինչպես հավատացյալը պետք է ինքնամաքվի, վերականգնվի եւ մաքրագործվի: Դրանք են՝ պահեցողությունը, ապաշխարությունը, ողորմությունը եւ աղոթքը: Այս չորսն իրարից անբաժան են, եւ իրար հետ կիրառելով է, որ հավատացյալն իրոք հոգեւոր որոշակի մաքրություն կարող է ձեռք բերել, վերականգնել իր հոգեւոր ներաշխարհը եւ ինչ-որ չափով մոտենալ Աստծուն», - նշում է նա:

Անդրադառնալով առկա իրավիճակից ելքեր գտնելու մասին հարցին, Տեր Ներսես քահանա Արյանը գտնում է, որ մեզ հետ չի կատարվում մի բան, որի արմատները մեր մեջ չեն: «Այս իրավիճակն այսպիսի ողբերգական հանգրվանի չէր հասնի, եթե մեր խնդիրներն այս աստիճան սրված չլինեին եւ մենք առաջին հերթին կարողանայինք այս երեսուն տարիները ճիշտ օգտագործել, այլ

բացառիկ հնարավորությունը չմսխել: Հին կտակարանում այսպիսի պատմություն կա, երբ Աստված հրեաներին դուրս է հանում եգիպտական գերությունից, նշաններով, հրաշքներով, եգիպտացիներին հասցված հարվածներով անապատով բերում է դեպի Ավետյաց երկիր: Այդ ժամանակ հետախույզներ են ուղարկում, որպեսզի տեսնեն այն երկիրը, որ Աստված իրենց խոստացել է: Հետախույզները, բացառությամբ երկու հոգու, վերադառնալով՝ սարսափած պատմում են, որ այն հսկաների երկիր է, անհնար է հաղթել, իրենք երկիրը գրավելու որեւէ շանս չունեն: Այստեղ Աստծո համբերության բա-



ժակը լցվում է: Աստված բազմաթիվ հրաշքներով իր առաջնորդությամբ մարդկանց հասցնում է Ավետյաց երկիր: Բայց այդքանը բավարար չի լինում, որպեսզի մարդիկ կտրվեն ստրկության ժամանակաշրջանից, անընդհատ երանությամբ հիշում են, որ Եգիպտոսում մտով լցված կաթանների շուրջ նստած էին, հանգիստ, խաղաղ կյանքով ապրում էին ստրկության մեջ: Աստված ասում է՝ 40 տարի պիտի անապատներով շրջեք, մինչեւ ստրկության սերունդը մեռնի, նոր ազատության սերունդը գա», - Հին կտակարանի պատմությունը մեջբերում է քահանան ու կապելով այսօրվա իրավիճակի հետ՝ նշում, որ մեզ մոտ էլ այսպիսի մի «անապատային» շրջան է սկսվել:

«Մեծ պահքի խորհրդի առումով՝ գտնվել ենք դրախտում, բայց դրա արժեքը չենք զգացել ու վտարվել ենք այնտեղից: Հիմա ավելի ծանր ճանապարհով ենք ընթանում, որի ընթացքում սխալները պետք է սրբագործվեն: Առաջին հերթին, մեր մեջ եղած այս ամբողջ մաղձը պետք է հանենք: Մենք տեսնում ենք, թե ինչ է կատարվում. ներքին սահմանազատումներ, բաժանումներ կան՝ քաղաքական, սոցիալական, կրոնական: Եվ մեր ժողովուրդը կարծես ավելի շատ մտահոգված է այլ հարցերով, քան իր մաշկի վրա տեղացող հարվածներով: Մենք պետք է գիտակցենք՝ անկախ նրանից, թե քո երկրի փրկությունը հյուսիսի, արեւմուտքի, հարավի կամ որեւէ այլ տեղի հետ ես կապում, դրանցից որեւէ մեկը իրատեսական չէ, եթե դու ինքդ չես սիրում քո երկիրը, քո պետականությունը, քո ազգակցին եւ ընդհանուր մտահոգությունների շուրջ չես համախմբվում», - ասում է Տեր Ներսեսը:

Խոսելով պառակտված, հուսահատված վիճակում հոգեւոր իշխանության շուրջը համախմբվելու մասին, Տեր Ներսես քահանա Արյանը նկատում է, որ այն անհրաժեշտություն է. «Տարբեր պատասխանատու անձանց հրապարակային ելույթները նայելով՝ կարելի է ասել, որ ամենապետականամետը, ամենաադեկվատը՝ հենց ամենայն Հայոց կաթողիկոսի հորդորները, ելույթները, կոչերն են: Պարտադիր չէ, որ եկեղեցին կամ որեւէ եկեղեցական պետական պաշտոն զբաղեցնի: Ընդհակառակը, ես կարծում եմ, որ եկեղեցին այդ ամենից միշտ բարձր պետք է մնա: Այդ բարձրության մեջ պիտի կարողանալ համախմբել բոլորին, ոչ թե իջնել պաշտոնի մակարդակի: Ամենաբարձր պաշտոնը հենց հոգեւոր իշխանությունն է, որովհետեւ այն մարդկանց սրտերի հետ է կապված: Մարդիկ կամովին են ընդունում այդ իշխանությունը, այն դիտարկում որպես դուռ դեպի հավիտենականություն»:

Մեր եկեղեցին բացառիկ է նաեւ այն առումով, որ կրկնակի առաքելություն է ստանձնել՝ իր հոգեւոր հոտի փրկությունը ոչ միայն հավիտենական կյանքի համար, այլ նաեւ հենց այս աշխարհում ազգապահպանության խնդիրը, որը ժամանակին տարբեր փուլերում եկեղեցին իրականացրել է:

Սակայն, ըստ քահանայի, հոգեւորականը թելերը կտրած թռչուն է, լավագույն դեպքում՝ կարող է քայլել, բայց թռչել չի կարող: Հավատացյալները, ժողովուրդն են թելեր տալիս եկեղեցականին:

Տեր Ներսես քահանա Արյանը պատերազմից հետո հավատացյալների նոր շարժ է նկատում դեպի եկեղեցի: Ծփվելով հազարավոր մարդկանց հետ, նա համոզված է, որ շատ դեպքում առկա խնդիրները ամենալավը հոգեւորականն է տեսնում: «Հասարակությունը պայմանականորեն կարելի է երկու մասի բաժանել, մի մասը տեսնում է այս ամբողջ ողբերգությունը, կրում է իր վրա, մի մասի համար էլ կարծես թե ոչինչ չկա, եթե պահի տակ պայթյուններ բան չկան, լրահոսը մի փոքր հանգստանում է, անցնում են բնական, առօրյա կյանքին: Դժվար է ասել, թե ինչպես կարելի է կամրջել հասարակության այս երկու հատվածները: Պարզ է, մարդիկ ձգտում են լավ ապրել, բարեկեցության հասնել, բայց պիտի քո հնարավորությունները հաշվարկես, քո իրավիճակը, առաջնահերթությունները ճիշտ դիտարկես, որպեսզի հասկանաս՝ նախ ինչ խնդիր պիտի լուծես, նոր անցնես երկրորդականին», - նշում է քահանան:

Նրա կարծիքով՝ մեր առաջնահերթ խնդիրը, ամենամեծ բացթողումը եղել է դաստիարակության ոլորտը՝ դպրոցից մինչեւ հասարակական դաստիարակություն: Երկրորդ առաջնահերթությունը ռազմական անվտանգությունն է: «Եթե մենք այսօր ունենայինք պահի լրջությունը լիարժեք գիտակցող, հայրենասեր, հոգեւոր արժեքներով ապրող հասարակություն, ապա այդպիսի հասարակությանը հնարավոր չէր լինի խաբել պոպուլիստական բառերով կամ կեղծ հայրենասիրական, ռազմահայրենասիրական պաթոսով: Իսկ ճիշտ կրթված, դաստիարակված հասարակությունը նման խաբկանքների չէր ենթարկվի եւ ամեն ինչ հալած յուրի տեղ չէր ընդունի», - նշում է Տեր Ներսեսը:

Տարեկիկ ԱՐԱՋԱՆՅԱՆ

## ՀՀԴ Երիտասարդական եւ ուսանողական միությունների օժանդակությունն արցախցիներին

Ադրբեջանը Արցախը հայաթափելու նպատակով շուրջ 2 շաբաթ շարունակ եղանակային ցուրտ պայմանների պարագայում անջատել էր Արցախի գազամատակարարումը: Այդ պայմաններում Արցախում ստեղծված հումանիտար աղետի հետեւանքները մեղմացնելու նպատակով ՀՀԴ Ֆրանսիայի «Նոր սերունդ» երիտասարդական միությունը հայտարարել էր դրամահավաք, որից գույացած միջոցներով 650 հեղուկ գազի բալոններ մարտի 31-ին տեղափոխվել են Արցախ:

ՀՀԴ Արցախի եւ Հայաստանի երիտասարդական միությունների օժանդակու-

թյամբ ՀՀԴ Ստեփանակերտի եւ շրջանների կոմիտեների գրասենյակում Արցախի շուրջ 650 ընտանիքների կտրամադրվեն լիցքավորված հեղուկ գազի բալոնները:

ՀՀԴ Երիտասարդական եւ ուսանողական միությունները առաջին անգամ չէ, որ դժվարին պահերին նեցուկ են լինում արցախահայությանը:

Արցախում սահմանային իրավիճակի լարվածության հենց սկզբնական օրերին ՀՀԴ Արցախի երիտասարդական միության եւ ՀՀԴ շրջանային կոմիտեությունների ընկերները մեկնել են սահմանային ամենաթեժ կետեր:



